

## ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԻՄՈՒՄԸ ԵՈՒՆԵՍԿՕ-ԻՆ

Վերջին օրերին ատրպեյնամական եւ միջազգային մամուլն անդրադարձաւ Պաֆուի 26 Կոմիսարներին յուշարձանի խնդրին: Պարզու՛մ է, որ ատրպեյնամական դեկավարուքիւնը որոշել է ապամոնտաժել 26 Կոմիսարներին յուշարձանը եւ նրանց անհիմնօրր հանելով, տեղափոխել Պաֆուի ծայրամասերից մէկը:

Հաշուի առնելով այն փաստը, որ Պաֆուի 26 Կոմիսարներին անուընախ եւ առաջ կապու՛մ են 20-րդ դարի մեծ մտաւորական եւ յեղափոխական գործիչ Ստեփան Ծախումբանի հետ, մենք՝ Հնչակեան երիտասարդներս, վստահ ենք, որ այս քայլն ուղղուած է առաջին հերթին հայ տեսակի եւ հայի անուան ոչնչացման հետ:

Պաֆուի 26 Կոմիսարներին անհիմնօրր անարգութեամբ յարգող եւ նախիջեւանի հայկական խաչքարերի ոչնչացմանն ու, առհասարակ, Ատրպեյնամում գտնուող ողջ հայկական մշակութային կոթողների ոչնչացմանը:

Ելնելով վերոնշյալից՝ պահանջում ենք եմֆեզիս 26-ի դեկավարութիւնից հետաքրքրուել 26 Կոմիսարների յուշարձանի նախատարրը եւ տալ ատրպեյնամական հերթական մշակութային յանցագործութեան գնահատականը:

**ՄԻՀԿ «Մարգիս Տիրումի»  
 Ռեսանդական երիտասարդական  
 Միութիւն**

## ԵՐՈՂԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ ԹՈՄԱՍ ՀԱՄՄԱՐՊՈՐԿ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ՝ «ԴԱՏԵՑԷՔ ԵԹԸ ՓԱՍՏԵՐ ՈՒՆԻՔ, ԵԹԸ ՈՉ՝ ԱԶԱՏ ԱՐՉԱԿԵՑԷՔ»

Եւրոպայի Խորհուրդի Մարդու իրաւունքի հարցերու յանձնակատար Թոմաս Համարպորկ Յուլիս 15-ին հանդիպում ունեցաւ Հայաստանի լրագրողներուն հետ եւ ներկայացուց Հայաստան կատարած իր եւօրեայ այցելութենէն ստացած տպաւորութիւնները:

Համարպորկ Հայաստանի մէջ ուսումնասիրած է Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵԽՎ) 1609 եւ յատկապէս 1620 բանաձեւերու կատարման ընթացքը, քանի որ Սեպտեմբեր 11-ին պէտք է զեկոյց պատրաստէ ԵԽ մոնիտորինգի խումբի համար՝ քաղաքական բանտարկեալներու եւ Մարտ 1-ի իրադարձութիւններու ուսումնասիրութեան վերաբերելով:

Մարդու իրաւունքի յանձնակատարը Երեւանի մէջ հանդիպած է նախագահի, խորհրդարանի նախագահի, մի քանի նախարարներու, դատախազի, ոչ կառավարական կազմակերպութիւններու ներկայացուցիչներու, Լեւոն Տէր-Պետրոսեանի, կալանաւորուած անձերու եւ անոնց ընտանիքներու անդամներուն հետ:

Թոմաս Համարպորկ յայտնեց, որ իր հանդիպումներու ընթացքին երկար քննարկում ունեցած է, թէ արդեօ՞ք բանտերու մէջ գտնուողները քաղաքական բանտարկեալ են: «Ես մտահոգութիւն արտայայտած եմ այդ կա-



ԵԽ-ի մարդու իրաւունքի յանձնակատար Թ. Համարպորկ մամուլի ասուլիսի ընթացքին

պակցութեամբ», - ըսած է Համարպորկ: Անոր կարծիքով, մտահոգիչ է այն, որ քաղաքական ակտիւութիւն ցուցաբերած մարդիկ արդէն 4,5 ամիս ազատագրուած են եւ անոնց կալանքի ժամկէտը կ'երկարացուի:

Համարպորկ մտահոգիչ նկատեց նաեւ, որ այդ մարդոց գործը դատարան է լուրարկուած: Այս կապակցութեամբ ան դիմած է

Հայաստանի իշխանութեան, որ եթէ ունի մեղաւորութեան ապացոյց, ապա գործը թող արագ տանին դատարան, իսկ եթէ ոչ, ապա թող այդ մարդիկ ազատ արձակուին:

Միւս կողմէ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան Յանձնակատար Թոմաս Համարպորկի հետ հանդիպման ժամանակ ներկայացուցած է այն փաստաթուղթը, որով յատուկ քննչական ծառայութեան ղեկավարը Վայոց Ձորի մարզի դատախազին հրահանգած էր հարցաքննել Տէր-Պետրոսեանի աջակից բոլոր ակտիւիստներուն եւ անոնց հարազատներուն:

«Պարոն Տէր-Պետրոսեանը, առաջին հերթին, ներկայացրեց վերջերս իր կողմից հրապարակուած այն փաստաթուղթը, որով քննչական ծառայութեան պետը ապօրինի յանձնարարութիւն էր ուղարկել շրջանային դատախազներին, որի հիման վրայ ամբողջ Հայաստանով մէկ ձեռնարկուեց

Շաբ.ը էջ 4

## ԵՐԿՈՒ ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԵՆ ՆԵՐՍ



Պետական նախարար Ժան Օղասապեան

Մեծամասնութեան եւ ընդդիմադրութեան միջեւ ամիս ու կէս տեւող բանակցութիւններէ ետք, Յուլիս 12-ին Լիբանան ունեցաւ իր նոր՝ ազգային միասնականութեան կառավարութիւնը:

Վարչապետ Ֆուատ Սինիորայի գլխաւորած 30 նախարարներէ բաղկացած կառավարութեան մէջ կը գտնուին երկու հայեր՝ Ժան Օղասապեան եւ Ալան Թապուրեան:

Խորհրդարանական մեծամասնութեան մաս կազմող Ժան Օղասապեան նշանակուած է Պետական նախարար, իսկ ընդդիմադրութեան



Ռեժանիթի եւ ջուրի նախարար Ալան Թապուրեան

կողմէ առաջադրուած Ալան Թապուրեան նշանակուած է Ռեժանիթի եւ ջուրի նախարար:

Այս երկու նախարարները նաեւ կը ներկայացնեն Լիբանանահայութեան մէջ գոյութիւն ունեցող բաժանումները: Ս.Դ. Հնչակեան եւ Ռեժանիթի Ազատական կուսակցութիւնները, որոնք մաս կը կազմեն անկախական «Մարտ 14»-ի ճակատին, ներկայացուած են Ժան Օղասապեանով: Իսկ, «Հրգպալլահ»-ի կողմնակից «Մարտ 8»-ի ճակատը, որուն կը պատկանի Հ.Յ.Դաշնակցութիւնը, ներկայացուած է Ալան Թապուրեանով:

## ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆԻ՝ ՅԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆՑ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐՈՎ

Հայաստանի Մարդու իրաւունքներու Պաշտպանի գրասենեակը ուսումնասիրած է Յատուկ Քննչական Ծառայութեան պետ Անդրանիկ Միրզոեանի՝ Վայոց Ձորի դատախազին տրուած քննչական յանձնարարականը, որ անցած շաբաթ հրապարակած էր Լեւոն Տէր-Պետրոսեան, եւ հանգած է այն եզրակացութեան, որ Յատուկ Քննչական Ծառայութեան պետը նման յանձնարարական տալու իրաւունք չունէր դատախազին:

Մարդու իրաւունքներու պաշտպան Արմէն Յարութիւնեան, մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, որ ուսումնասիրած է փաստաթուղթը ու օրէնքէն բխող իր դիտարկումները ներկայացուցած է, որոնք պիտի ուղարկուին ինչպէս Վայոց Ձորի դատախազին, այնպէս էլ Յատուկ Քննչական Ծառայութեան պետին եւ այլ պատկան մարմիններուն:

Ըստ Արմէն Յարութիւնեանի երկրի օրէնսդրութեամբ դատախազութիւնը կը վերահսկէ քննչա-

կան մարմնի գործողութիւնները եւ ոչ թէ կատարէ անոր յանձնարարութիւնները»:

«Քննչական յանձնարարութիւնը չի կարող տրուել դատախազին: Հասցէատէրը պէտք է լինի բացառապէս նախաքննութեան կամ հետաքննութեան մարմինը», - ըսաւ Արմէն Յարութիւնեան: - «Բացի այդ, պէտք է պարզել, թէ Վայոց Ձորի դատախազը ինչպիսի գործողութիւններ է իրականացրել այդ յանձնարարութեան հիման վրայ: Տրուե՞լ են արդեօք ցուցումներ ոստիկանութեանը. եթէ՛ այո, ապա դրանք անօրինական են, քանի որ նա տուեալ գործով հսկող դատախազ չէ»:

«Աւելին», - շեշտեց Մարդու իրաւունքներու Պաշտպանը, - «եթէ այդ յանձնարարականի հիման վրայ քննչական եւ օպերատիւ գործողութիւններ են կատարուել, ապա դրանք կարող են կասկածի տակ դրուել: Ինչպէս նաեւ՝ ձեռք բեր-

Շաբ.ը էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

«ՆՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ» ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹ ՀԱԿԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայաստանի այսպես կոչված նոր իշխանութեան գործողութիւնների կապակցութեամբ բնական հարց կայ հանրութեան շրջանում՝ այդ գործողութիւնները իսկապէս անկեղծ մղում են, ինչ որ բան փոխելու անկեղծ ցանկութիւն, թէ պարզապէս իմիտացիա են, որ նպատակ ունեն ներքաղաքական եւ ներհասարակական լարուած շրջանում մեղմել հանրութեան դժգոհութիւնը եւ սիրաշահել հանրութեանը, տպաւորութիւն ստեղծելով, թէ փոխուել է ոչ միայն նախագահը, այլ նաեւ իշխանութեան որակը: Այդ առումով էլ հարց է առաջանում, թէ արդեօք ինչով է պայմանաւորուած այդ որակի փոփոխութիւնը, եթէ իշխանութեան գործողութիւնները իմիտացիա չեն: Արդեօք որակի փոփոխութեան դրդապատճառն այն է, որ Հայաստանում տեղի ունացած նախագահի ընտրութեանը Լեւոն Տէր-Պետրոսեանին յաջողուց հասնել լուրջ հասարակական մոբիլիզացիայի եւ հանրութեանը դարձնել գործօն, ինչը իշխանութիւնն այլեւս չի կարող հաշուի չառնել: Կամ արդեօք իշխանութեան որակի փոփոխութիւնը պայմանաւորուած է ժամանակի պահանջներով, եւ անկախ Լեւոն Տէր-Պետրոսեանի մասնակցութիւնից, իշխանութիւններն անելու էին այն, ինչ անում են հիմա: Կամ, արդեօք իշխանութեան որակի փոփոխութիւնը պայմանաւորուած է գուտ նախագահի փոփոխութեան հանգամանքով, որ Ռոբերտ Բոչարեանը չէ այլեւս նախագահը, այսինքն որ նա էր իշխանութեան որակական փոփո-

խութեան գործընթացի խոչընդոտը: Անկասկած կը լինեն մարդիկ, ովքեր կը կարծեն, միգուցէ իրաւացիօրէն, որ կարելոք իշխանութեան գործողութիւնների որակի փոփոխութեան պատճառը չէ, այլ հենց փոփոխութիւնը՝ իր արդիւնքով: Թերեւս: Բայց, նախ, դեռ արդիւնքը նկատելի չէ: Գուցէ ժամանակ է պէտք, բայց փաստն այն է, որ նկատելի չէ: Եւ երեւի թէ հենց փոփոխութեան պատճառն է կարելոք, արդիւնքին շուտ հասնե-

Եթէ իշխանութեանը որակական փոփոխութեան է պարտադրում Լեւոն Տէր-Պետրոսեանն իր ձեւաւորած համաժողովրդական շարժումով, ապա փաստ է դառնում, որ այն լուրջ քաղաքական գործօն է

լու համար, կամ արդիւնքը մօտեցնելու համար: Ի վերջոյ, փոփոխութեան իմիտացիոն բնույթի բացայայտումն էլ արդիւնք է, կարելոք արդիւնք, որը կը կանխի հասարակութեանը նորովի մոլորեցնելու իշխանական մարտավարութիւնը: Թերեւս արժէ դիտարկել իշխանութեան գործողութիւնների արտաքին կողմի փոփոխութեան վերը նշուած երեք հիմնական պատճառներն առանձին: Եթէ իշխանութեանը որակական փոփոխութեան է պարտադրում Լեւոն Տէր-Պետրոսեանն իր ձեւաւորած համաժողովրդական շարժումով, ապա փաստ է դառնում, որ այն լուրջ քաղաքական գործօն է, հետեւաբար ակնյայտ է, որ նախագահի ընտրութիւնից յետոյ երկրում տեղի է ունեցել քաղաքական ստատու-

քվոյի փոփոխութիւն: Իսկ այդ իրավիճակում, եթէ իշխանութիւնն իսկապէս ունի որակապէս փոփոխութեան ցանկութիւն, ապա պարտաւոր է գնալ խորհրդարանի արտահերթ ընտրութեան, քանի որ չի կարող արդիւնաւէտ լինել որեւէ պետական համակարգ, եթէ այդ համակարգի ներկայացուցչական մարմինը՝ պառլամենտը, չի արտացոլում երկրում առկայ քաղաքական ստատու-քվոն: Եթէ իշխանութեան որակի փոփոխութեան առկայ արտաքին

նշանները պայմանաւորուած են ժամանակի հրամայականները հաշուի առնելով, ապա այդ դէպքում, եթէ իշխանութիւնն իրապէս ունի որակապէս փոփոխելու ցանկութիւն, պէտք է ժամանակի պահանջները հաշուի առնել մինչեւ վերջ եւ ոչ թէ այսպէս կոչուած նախկին (1998-2008) իշխանութեան կադրերին տեղեւոր փոխի, ժամանակին եւ դրա մէջ գտնուող շնչաւոր ու անշունչ բոլոր առարկաներին շփոթեցնելու համար: Եթէ ինդիքը պայմանաւորուած է Ռոբերտ Բոչարեանի անձի փոփոխութեամբ, ապա այդ դէպքում էլ սեփական գործողութիւնների, որակապէս փոփոխելու փորձերի անկեղծութիւնը հանրութեանը ապացուցելու եւ հասարակութեանը տարատեսակ "հոգեխան-

գարմունքներից" գերծ պահելու համար Սերժ Սարգսեանը պէտք է տայ Ռոբերտ Բոչարեանի իշխանութեան քաղաքական գնահատականը, յատկապէս երկրի համար առանցքային հանդիսացող ինդիքների առնչութեամբ, մատնանշելով, թէ իր կարծիքով որն է եղել այդ հարցում Ռոբերտ Բոչարեանի հիմնական սխալը: Խօսքը Ռոբերտ Բոչարեանին դատելու, կամ հետապնդելու մասին չէ: Սակայն, եթէ երկրում տեղի են ունեցել նաեւ իրողութիւններ, որոնք հանրութեան մօտ ունեն յանցագործութեան ընկալում, ապա Սերժ Սարգսեանը այդ դէպքում պէտք է Ռոբերտ Բոչարեանին հնարաւորութիւն տայ ապացուցելու, որ նա անմեղ է, իսկ հանրութեանն էլ համապատասխանաբար պէտք է հնարաւորութիւն տայ ապացուցելու, որ նա մեղաւոր է: Այդ հնարաւորութիւնը, ցանկացած նորմալ երկրում, անկախ դատախազական համակարգն է: Հնարաւոր է, որ ներկայիս (2008-ից յետոյ) իշխանութեան որակի փոփոխութեան արտաքին նշանները պայմանաւորուած են վերը նշուած բոլոր երեք պատճառներով: Սակայն այդ պարագայում էլ Սերժ Սարգսեանի անելիքն ամէն մի պատճառի մասով մնում է նոյնը՝ պարզապէս նա միանգամից անի երեք բան, եթէ իրապէս ցանկանում է Հայաստանում ձեւաւորել նոր՝ հասարակութեան եւ ժամանակի պահանջներին համապատասխան իշխանութիւն, եւ ոչ թէ ընդամենը քաղաքացիներին մոլորեցնելու մեխանիզմները նորոգելով խորացնել հասարակութեան եւ ժամանակի հետ ունեցած իր հակասութիւնը:

ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ  
«ԼՐԱԳԻՐ»

«ԱՌԱՋ ՀԱՅԱՍՏԱՆ» ԸՆԴԴԵՍ «ԲԱՐԳԱԻՄՃ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

Եթէ տեղեկանաք, որ Գագիկ Ծառուկեանին պատկանող ձեռնարկութիւններում սկսուել են հարկային ստուգումներ՝ չգարմանաք: Դա համար է Սերժ Սարգսեանի ինքնահաստատման ճիգը: Գիտակցելով, թէ որքան աննախանձելի վիճակում է յայտնուել ինքը՝ ժողովուրդը մի կողմից բացայայտօրէն ընդդիմանում է, միւս կողմից՝ արհամարհում, երրորդ կողմից՝ ատում, Հիւսիսայինից՝ անիծում, Սերժ Սարգսեանը որոշել է դիմել վճռական գործողութիւններ: Նպատակը պարզ է՝ պէտք է ինչ-որ կերպ, թէկուզ աներեւակայելի ջանքերով հեղինակութեան փշրանքներ վաստակել, անսպասելի քայլեր կատարել՝ ինքնահաստատուելու եւ հաւասարակշռութիւնն իսպառ չկորցնելու: Այս վիճակն առաւել բնորոշ է վճռականութեամբ թէեւ աչքի չընկնող, բայց ազարտային խաղերում ինքնատիրապետումը կորցնելու հակուած անձանց, որոնց համար ինչ-որ պահի արդէն միեւնոյն է՝ կատարած խաղադրոյքն արդարացուած է արդեօք: Այլ կերպ ասած, նա մտել է ջուրը եւ պէտք է ցոյց տայ, որ թրջուելուց չի վախենում: Շուրջ երկու ամիս առաջ, երբ Սերժ Սարգսեանին նախագահական նստավայրը ճոճք էր թւում, աշխարհը՝ ծիրանագոյն բուրաստան, «Տարեգիր» թերթում լուր հրատարակուեց, թէ Ռոբերտ Բոչարեանն աչք է տնկել Գագիկ Ծառուկեանի ունեցուածքի վրայ: Հետագայում այդ լուրը հրապարակուեց այլ թերթերում եւս: Ոչ Բոչարեանը, ոչ Ծառուկեանը «Մեղիամաքստով» կամ «Կենտրոնով», որքան մեղ է յայտնի, չհերքեցին

այն: Սա նշանակում է, որ հրապարակուածը հեռու չէր ճշմարտութիւնից: Նաեւ սա էր, որ ոմանց հիմք տուեց ենթադրելու, թէ իրականում Ռոբերտ Բոչարեանն է Սերժ Սարգսեանի թիկունքից կառավարում երկիրը, դիցուք՝ անօրինում մեծահարուստների ունեցուածքը: Երկու օր առաջ, սակայն, Բոչարեանը «Չրեց» այդ ենթադրութիւնը, անուանելով այն «անհեթեթ է ու փաստելով, որ եթէ այդպէս լինէր՝ Թուրքիայի նախագահը Երեւանում ֆուտպոլ նախընտրէր չէր ստանայ: Ակնարկը յստակ էր. ինքը հիացած չէ Սերժ Սարգսեանի գործողութիւններով. այսինքն, այս անգամ կարծես թէ իրօք սիւնական երկուորեակների արանքով սեւ կատու է անցել: Ի՞նչ կատու է դա: Բանն այն է, որ Սերժ Սարգսեանին այնքան էլ դուր չեն եկել Բոչարեանի չաւակնութիւնները՝ թաթը դնել Ծառուկեանի ունեցուածքին: Ի վերջոյ խօսքը հսկայական կարողութեան վերաբաժանման մասին է: Խօսքն այն մասին է, որ «Առաջ Հայաստանից» մի քանի լաթ է մնացել, ու այսպէս շարունակուելու դէպքում հնարաւոր է սոցիալական պայթիւն: Մինչդեռ «Բարգաւաճ Հայաստանը», որպէս անձեռնմխելի կղզեակ, մնում է անմատչելի Սերժ Սարգսեանին: Ստեղծուած իրավիճակում, ահա, վերջինս կայացրել է պայթուցիկ պայթուածի որոշում, որը վերեւում համեմատեցինք ինքնատիրապետումը կորցնելու հակուած ունեցող խաղամոլի խաղադրոյքի հետ: Այն է՝ Սերժ Սարգսեանը Հարկային Պետական Ծառա-

լուկեանը յանձնարարել է մանրակրկիտ ստուգել Գագիկ Ծառուկեանին պատկանող ձեռնարկութիւնների հարկային պարտաւորութիւնների կատարման ընթացքը: Ընդ որում, խօսքը վերաբերում է ոչ միայն ընթացիկ պարտաւորութիւններին, այլեւ Բոչարեանի նախագահութեան օրօք մոծուած հարկերի վերահաշուարկին: Ծառուկեանին, բազմիցս է գրուել, երբեք չեն գայթակղել խոշոր հարկատուների մէջ առաջատարը լինելու դափնիները. նա ոչ այնքան հարկեր է մոծել պետքի՞, որքան յատկացումներ արել նոյն Բոչարեանին ու Սարգսեանին: Սեր տեղեկութիւններով, այժմ Գագիկ Ծառուկեանը Ռոբերտ Բոչարեանին խնդրում է որ բարեխօսի Սերժ Սարգսեանին, եւ չկատարուի իր համար կործանարար վերահաշուարկը: Դժուար չէ գուշակել, որ խօսքը մի քանի տասնեակ միլիարդ դրամի մասին է: Գու՞մար, որն այնքան անհրաժեշտ է Սերժ Սարգսեանին բիւջէն լցնելու եւ գոնէ մի քիչ ժողովրդի աչքին պարզերես երեւալու, իր տակ երերացող աթոռին հաստատուելու համար: Դժուար է ասել, թէ ինչ դիրքորոշում կ'որդեգրի ԲՀԿ-ի սերժամէտ հատուածը, ի դեմս, ասենք, անկուռ Նաիրա Զոհրաբեանի. կը շարունակի՞ նոյնչափ ոգեշնչուած գովերգել Սերժ Սարգսեանին, թէ՞ հիմա էլ կը սկսի անխնայ քննադատել նրան: Փոխարէնը հեշտ է գուշակել, թէ այս պարագայում ինչ նոր կարգախօս կը հնչեցնէր Նիկոլ Փաշինեանը. «Մի բոմժացիր»:

«ՀԱՅՔ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԼՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻ ՇՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Գեո. (626) 797-7680  
Ֆաքս. (626)797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՏՈՐԱԳՐԱՐԱԿԱՆ Ռ. ՔՈՉԱՐԵԱՆԻՆ ՉԱԿԱՅԻ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԴԱՅԱՆՁՈՎ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Այսօրուանից Համաժողովրդական Շարժման Կենտրոնը նախաձեռնում է ստորագրահաւաք՝ Հայաստանի նախկին նախագահ Ռոբերտ Քոչարեանին Հազարի դատարանում պատասխանատուութեան ենթարկելու պահանջով: Այդ մասին յայտարարեց շարժման ներկայացուցիչ Դաւիթ Շահնազարեանը:



Համաժողովրդական Շարժման ներկայացուցիչ Դաւիթ Շահնազարեան

Ստորագրահաւաքի նախաձեռնութեան տեսքով ասուած է. - «Ռոբերտ Քոչարեանը Հայաստանի պետականութեան եւ հայ ժողովրդի նկատմամբ գործել է ծանր յանցանքներ: Նա երկու անգամ նախագահական իշխանութեան է տիրացել կեղծ փաստաթղթերի հիման վրայ՝ կատարելով իշխանութեան իւրացման ծանր յանցագործութիւն: Իր միանձնեայ եւ բռնատիրական իշխանութիւնը նա ամբողջապէս արիւնով՝ 1999 թուականի Հոկտեմբերի 27-ի ոճրագործութեամբ, եւ Հայաստանում հաստատեց իրական աւագակապետական ռեժիմ: Նա իշխանութիւնը աւարտեց կրկին արիւնով՝ 2008 թուականի Մարտի 1-ի դաժան սպանւում, որ իր բոլոր յատկանիշներով յանցագործութիւն է մարդկութեան դէմ: Ուստի եւ մենք՝ Հայաստանի Հանրապետութեան ներքոտորագրեալ քաղաքացիներս, պահանջում ենք Մարտի 1-ի ոճրագործութեան միջազգային անկախ հետաքննութիւն, իսկ Ռոբերտ Քոչարեանի գործը յանձնել Հազարի միջազգային քրէական դատարան»:

հրահանգել Մարտի 1-ի բոլոր գործողութիւնները, ինչպէս նաեւ հաստատում է, որ Հայաստանում կալանաւորուածները եւ ձերբակալութիւնները կատարուած են քաղաքական հրամանով, եւ ինքն է տուել այդ հրամանները:

Անդրադառնալով գործող նախագահին՝ Դաւիթ Շահնազարեանը չի շեղուել իր Սերժ Սարգսեանին ժամանակ է տրուած: Պահանջները յայտնի են՝ մինչեւ Օգոստոսի 1-ը ազատել «քաղաքացիական պատասխանատուութեան ենթարկել այն անձանց, որ մեղաւոր են յանցագործութիւններին՝ ըստ ընդդիմութեան ներկայացրած ցուցակի. - «Պահանջները դրուած են: Եթէ այդ պահանջները չկատարուեն, կը դրուի արդէն նոր պահանջ, եւ մենք ուղղակիորէն արդէն, կարծում ենք, կը գնանք նոր նախագահական ընտրութիւններին»:

Յուլիս 14-ին կայացած ասուլիսում Դաւիթ Շահնազարեանը Մարտի 1-ի դէպքերի համար պատասխանատուութեան առումով երկու անուն տուեց՝ Ռոբերտ Քոչարեան եւ գլխաւոր դատախազ Ադուան Յովսէփեան. - «Յամենայն դէպս, ես կարծում եմ, որ երկու հոգու մօտ հոգեխանգարմունք իսկապէս եղել է այն բանից յետոյ, երբ Տէր-Պետրոսեանի ղեկավարած շարժումը այդպիսի հզօր թափ ստացաւ. երեւի Ռոբերտ Քոչարեանի եւ Ադուան Յովսէփեանի մօտ այդ հոգեխանգարմունքը իսկապէս եղել է»:

Հարցին՝ հնարաւոր է արդեօք, որ Օգոստոսի 1-ի հանրահաւաքը ընդդիմութիւնը փորձի անցկացնել Ազատութեան Հրապարակում, Դաւիթ Շահնազարեանը պատասխանեց, թէ իշխանութիւնները փորձում են «ահաբեկիչների նման» պաշտպանուել երեսներով. - «Ինչ ասեմ, այդ շանտաժը առայժմ աշխատում է: Մենք կը ստիպենք, իհարկէ, նրանց, որ նրանք դադարեցնեն այդ ակցիան՝ «Փոքրիկ երեւանցի», ակցիան, որը կազմակերպել է փոքրօրի ոչ երեւանցի քաղաքացիները: Ոչ, առայժմ նման մտադրութիւն չկայ, թող համարեն, որ իրենց այդ շանտաժը աշխատում է»:

Մեկնաբանելով Ռոբերտ Քոչարեանի վերջին հարցազրույցը՝ Շահնազարեանը յայտարարեց, թէ այդ հարցազրույցում Քոչարեանը փաստացի ընդունում է, որ ինքն է

Միաժամանակ, նա վստահեցրեց, որ հանրահաւաքը, ամէն դէպքում, կը կայանայ՝ վերը բերուած պահանջների ենթատեքստով:

ՌՈՍԱՆ ԲԱԼԱԵԱՆ. «ԶՈՐՈՒԵԼ ԵՆ ԻՍ ՉԱՅԵՐԸ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Կինեմատոգրաֆի հանրայայտ ներկայացուցիչները, որոնք Հայաստանում են «Ոսկէ Ծիրան» կինոփառատօնի շրջանակներում, այսօր հաւաքուել էին «Երեւան» հիւրանոցի հարկի տակ՝ միմեանց եւ լրագրողների հետ շփուելու: Հիւրանոցի ձեմասրահում ասես միջազգային կինոյի եւ հայկական կինոյի իւրատեսակ մերձեցում լինէր: Երիտասարդ հայ կինոնեոստրները, ովքեր առաջին քայլերն են անում կինոյում, հնարաւորութիւն ունեցան շփուելու առաջին մեծութեան աստղերի հետ:

Սարգսեանը եւ մշակույթի նախարար Յասմիկ Պողոսեանը: Ի դէպ մի հետաքրքիր փաստ, փառատօնն ուղիղ եթերում հեռարձակուած էր Հանրային Հեռուստատեսութեամբ: Ըստ նախատեսուած ծրագրի՝ ուղիղ եթերի հեռարձակումը պէտք է շարունակուէր մինչեւ ժամը 21-ը: Սակայն մօտ 20 րոպէ հեռարձակումից յետոյ ուղիղ եթերը Հանրային դադարեցրեց, ընդ որում շատ անսպասելի եւ առանց նախազգուշացման եւ սկսեց ցուցադրել ծրագրով չնախատեսուած «Հարսնացու Հիւսիսից» ֆիլմը: Եւ միայն 15 րոպէ յետոյ վազող տողով յայտարարութիւն տարածուեց այն մասին, որ «Կինոփառատօնի բացման արարողութեան շարունակութիւնը կարող էք դիտել «Նոր ալիքի» եթերում»: Թէ ինչ պատճառով դադարեցրուեց Հ1-ով ուղիղ հե-

«ԺԱՌԱՆՎՈՒԹԻՒՆ»-Ը ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ 5-ՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ

Հայաստանի Ազգային Ժողովում ներկայացուած միակ ընդդիմադիր քաղաքական ուժը՝ «Ժառանգութիւն» կուսակցութիւնը Ուրբաթ օրը կառավարութեան նիստերի դաճիճում գումարեց իր հինգերորդ կոնգրեսը, ընտրեց կուսակցութեան վարչութիւնն ու դրա նախագահին:



«Ժառանգութիւն» կուսակցութեան համագումարին ելոյթ կ'ուղեւնայ Ժիրայր Սէֆիլեան

Ընդդիմադիր կուսակցութեան համաժողովի մասնակիցներին ողջունելու եկածներէ թուում էին վարչապետ Տիգրան Սարգսեանը, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը, քաղաքական այլ ուժերի ու հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ:

Ներկաների բոլոր ընդունելութեան արժանացած Լեւոն Տէր-Պետրոսեանը իր խօսքում կարեկցանք յայտնեց «Ժառանգութիւն» կուսակցութեանը, որը ստիպուած է աշխատել «մեծամասամբ քրէական տարրերից կազմուած խորհրդարանում»:

Նախկին նախագահ կարեկցեց նաեւ վարչապետին. - «Շատ ծանր ժառանգութիւն էք ստացել: Ձեր պարտքն է նախեւառաջ մաքրել կառավարութեան աւզեան ախոռները»:

Վարչապետին բնորոշելով որպէս «պրոֆեսիոնալ» եւ «լուրջ տնտեսագէտ», որը «հասկանում է այս երկրի խնդիրները»՝ Տէր-Պետրոսեանը ասաց, որ Տիգրան Սարգսեանը «շատ անելիք» ունի կառավարութեան ներսում:

Տէր-Պետրոսեանը ելոյթում անդրադարձաւ իր շուրջը ձեւաւորուած նախընտրական դաշինքին՝ նշելով, որ այն պէտք է «փոխի իր բովանդակութիւնը». ընտրութիւններն աւարտուել են, եւ իրենք մտածում են «լուրջ ու մնայուն քաղաքական գործօն ստեղծելու» մասին, որը «ժամանակաւոր բնոյթ չի կրելու», «իրավիճակային նպատակներ չի հետապնդելու», այլ «միաւորելու է ողջ գիտակից հասարակութիւնը»:

Առաջին նախագահը «Ժառանգութիւն» կուսակցութիւնը բնորոշեց որպէս «համաժողովրդական շարժման խօսափողը խորհրդարանում». - «Ես վստահ եմ, որ այսուհետեւ եւս «Ժառանգութիւն»-ը լինելու է շարժման առանցքային ուժերից մէկը եւ նոր ձեւաւորուելիք Հայ Ազգային կոնգ: Աւելի վաղ ունեցած իր ելոյթում վարչապետ Տիգրան Սարգսեանը հնչեցրել էր

համագործակցութեան առաջարկ «Ժառանգութիւն» կուսակցութեանը. - «Ես չեմ եկել նշելու, որ կան հարցեր, որոնց շուրջ մենք ունենք տարբեր տեսակէտներ: Ես այստեղ եկել եմ կամուրջներ կապելու... Առաջարկում են շեշտերը դնել ոչ թէ մեզ բաժանող, այլ միաւորող կէտերի վրայ: Համագործակցութեան դռները միշտ բաց են ձեր առջեւ»:

«Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ, կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Բաֆֆի Յովհաննիսեանը իր ելոյթում անդրադարձաւ Մարտի 1-ի իրադարձութիւններին:

«Փաստօրէն Ազատութեան Հրապարակում կատարուեց անպատուութեան օպերացիան եւ դրանից ածանցեալ սպանդը: Հայոց մայրաքաղաքում հայր հային դիմահար կրակով սպաննեց՝ տասը անմեղ գոհ բերելով մեր երկրին՝ մի ամբողջ եղեռնի համարժէք: Եւ մինչ օրս ոչ մի կասկածեալ, հրահանգող, իրականացնող եւ ոչ էլ փաստող, թէ իբր ժողովրդի կողմից, քաղաքացիների կողմից կրակ է բացուել ոստիկանների վրայ», - յայտարարեց Բաֆֆի Յովհաննիսեանը:

Նրա խօսքով՝ անհրաժեշտ է, որ Ազգային Ժողովում ստեղծուած ժամանակաւոր Յանձնաժողովը «բոլոր պաշտօնեաներին հրաւիրելու հնարաւորութիւն ունենայ», այդ թուում՝ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարեանին:

«Հայաստանի երեք նախագահներին, բայց յատկապէս երկրորդին եւ նրա անվտանգութեան պետին եւ ծառայողներին, որ իրենք վկայութիւն տան», - ասաց Յովհաննիսեանը՝ շեշտելով, իր բնորոշմամբ, ամենակարեւորը. - «Արդեօք հնարաւոր է Ազգային Ժողովում հասնել վստահելիութեան մակարակի, երբ Ազգային Ժողովը ինքը մեղապից է Մարտի 1-ի եւ դրան հետեւող իրադարձութիւններին»:

ուարձակումը՝ դժուար է ասել, բայց ուկրաինացի կինոնեոստր, ծագումով հայ Ռոման Բալաեանը բացման արարողութեան ժամանակ իր ելոյթը սկսել է Մարտի 1-ի դէպքերի գոհների չիշատակը շարժելու կոչով եւ 1 րոպէ լուրթեամբ ամբողջ դաճիճը յարգել է Երեւանի կենտրոնում գոհուածների չիշատակը, ընդ որում՝ նաեւ կառավարութեան ղեկավարը: «Ես շատ էի անհանգստանում Մարտի 1-ի դէպքերի ժամանակ, ինձ չի հետաքրքրում, որ ամէն կուսակցութիւն ունի իր ընտրազանգուա-

ծը, ինձ հետաքրքրում է ընդհանուր կարծիքը. մարդիկ են գոհուել իմ Երեւանում, գոհուել են իմ հայերը, եւ կարեւոր է, թէ նրանք ինչ կուսակցութիւն են ներկայացրել, դրանք իմ հայերն են եւ ինձ համար թանկ է իւրաքանչիւր հայի կեանքը: Եթէ նրանք չգոհուէին, երեսներն ունենային, մենք աւելի շատ կը լինէինք աշխարհում, ինձ չի հետաքրքրում ինչ է եղել, ինչպէս է եղել, թէ ես տեսել եմ բացարձակապէս ամէն ինչ», - «Ա1+»-ի հետ զրոյցում ասաց կինոնեոստր Ռոման Բալաեանը:

ԼՈՒՐԵՐ

ՌԱՅՍ ԵՒ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ ԱՏՈՐԱԳՐԵՑԻՆ ԶԱՍԱԶԱՅՆԱԳԻՐ



ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը եւ ՀՀ արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանը Ուաշինգթոնի մէջ տեղի ունեցած հանդիպումի ընթացքին

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսն ու ԱՄՆ-ում գտնուող ՀՀ արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը ստորագրել են Հայաստանի Հանրապետության կառավարութեան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգների կառավարութեան միջեւ միջուկային ու ռադիոակտիւ նիւթերի մաքսանենգ փոխադրումների դէմ պայքարի ոլորտում համատեղ գործողութիւնների ծրագիրը:

Այս քաղաքական համաձայնագիրը արտայայտում է երկու երկրների կառավարութիւնների մտադրութիւնը միջուկային եւ ռադիոակտիւ նիւթերի մաքսանենգ փոխադրումները կանխելու, յայտնաբերելու եւ այդպիսի միջադէպերին արդիւնաւէտ կերպով արձագանքելու Հայաստանի Հանրապետութեան հզորութիւնները մեծացնելու ուղղութեամբ համագործակցութեան վերաբերեալ:

Ըստ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանա-

տան յայտարարութեան՝ այս համաձայնագրով ՀՀ եւ ԱՄՆ կառավարութիւնները նշանակալիորէն ամրապնդում են իրենց համատեղ ջանքերը, որոնք ուղղուած են ահաբեկիչների կողմից բարձր ռադիոակտիւութեան նիւթեր ձեռք բերելու վտանգի կանխմանը:

Այս համաձայնագիրը թուով 5-րդն է, որ ստորագրուել է ԱՄՆ կառավարութեան Միջուկային նիւթերի մաքսանենգ փոխադրումների դէմ պայքարի օժանդակութեան նախաձեռնութեան շրջանակում:

Մինչ այդ ստորագրուել են համաձայնագրեր Ուկրաինայի, Ղազախստանի, Վրաստանի ու Ղրղզստանի հետ: Այս համաձայնագրերի իրականացմանն աջակցելու նպատակով այս պահին ԱՄՆ կառավարութեանը գործընկերութեան յայտ են ներկայացրել 8 երկրներ ու 3 միջազգային կազմակերպութիւններ:

ԱՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՃԵԱՆ. «ՍԱՐԴԻԿ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՆ ՊԱՅՔԱՐԵԼ»

Արտախորհրդարանական ընդդիմադիր ուժերից Հայաստանի ժողովրդական կուսակցութեան (ՀԺԿ) նախագահ Ստեփան Դեմիրճեանը համոզմունք յայտնեց, որ ընդդիմութեան հանրահաւաքները եւ նստացոյցերը առաջիկայումս եւս կը շարունակուեն:

«Մարդիկ շարունակում են պայքարել եւ շարունակելու են պայքարել», - Յուլիս 15-ին լրագրողներին հետ հանդիպմանը ասաց ՀԺԿ-ի առաջնորդը: - «Եւ հասարակական կարծիքի հետ այս իշխանութիւնը չի կարող հաշուի չնստել: Եւ ինչքան շուտ հաշուի նստի, այնքան աւելի լաւ թէ՛ երկրի համար, թէ՛ հենց նոյն իշխանութեան համար, թէ՛ մեր ժողովրդի համար»:

Ձեւաւորուող Ազգային Կոնգրեսի վերաբերեալ Դեմիրճեանը ասաց. - «Յանուն կոնկրետ ինդիքների լուծման, իհարկէ, նպատակարար ենք համարում Կոնգրեսի ստեղծումը: Բայց մէկ կուսակցութիւն ստեղծելու մասին խօսելը ժամանակավրէպ է»:

«Ազատութիւն» ռադիոկայանի դիրտարկմանը, թէ այլ երկրներում (օրինակ, Հնդկաստանում, Հարաւաֆրիկեան Հանրապետութիւնում) Ազգային Կոնգրեսները իրենց նպատակներին հասել են

տամամեակների ընթացքում, Ստեփան Դեմիրճեանը արձագանքեց. - «Յուսով եմ, որ Հայաստանում շատ աւելի կարճ դա կը տեւի»:

«Փոփոխութիւնները պահանջում են յամառութիւն, հետեւողականութիւն, եւ բոլոր հարցերը չէ, որ անմիջապէս լուծուեն», - յաւելեց ՀԺԿ-ի առաջնորդը:

Մի քանի օրից կը լրանայ վարչապետ Տիգրան Սարգսեանի պաշտօնավարման 100 օրը: Հարցին, թէ ինչ է փոխուել սոցիալ-տնտեսական բնագաւառում, Դեմիրճեանը պատասխանեց. - «Մենք չենք տեսնում իրավիճակի լաւացում: Ըստ էութեան, երկրում շարունակում է գործել կլանային օլիգարխիկ համակարգը: Իհարկէ, 100 օրը այն ժամանակը չէ, որի ընթացքում կարելի է կտրուկ փոփոխութիւնների հասնել: Եւ, ինչ խօսք, մենք նկատի ունենք նաեւ օբիեկտիւ դժուարութիւնները: Սակայն լուրջ, եւ առայսօր չենք տեսնում զարգացման միտումներ»:

Ստեփան Դեմիրճեանը կրկին պատրաստակամութիւն յայտնեց իշխանութիւնների հետ երկխօսութիւն սկսելու առաջարկի կապակցութեամբ, բայց՝ միայն քաղաքատարկեալներին ազատ արձակելու դէպքում:

ՔԱՂԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ԶԱՐԱԶԱՏՆԵՐԸ ԿՐ ԴԻՄԵՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ազատութիւն քաղաքատարկեալներին», «Ազատ, անկախ Հայաստան», «Անտրժ, անոռք Հայաստան», - այս վանկարկումները երկուշաբթի կէսօրին լսում էին Եւրոպայի խորհրդի գրասենեակի դիմաց, որտեղ տեղի էր ունենում Եւրոպայի խորհրդի մարդու իրաւունքների յանձնակատար թոմաս Համմար-Յաւաստանեան հասարակական կազմակերպութիւնների հետ: «Հայոց Կանանց Շարժումը», որոնց ներկայացուցիչներից շատերի ամուսինները կալանաւորուած են, ԵՄ գրասենեակի մուտքի առջեւ ամուսինների նկարները պարզած, ցանկանում էին գրաւել Համմարպերկի ուշադրութիւնը: «Tomas, help us» / «Թոմաս, օգնիր մեզ»/, - վանկարկում էին կանայք: Մօտ կէս ժամ անց Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար Ժիրայր Սեֆրիւեանին չաջողուեց հանդիպել ԵՄ մարդու իրաւունքների յանձնակատարի տեղակալի հետ:



Ցուցարարներ Եւրոպայի խորհրդի երեսնի պերկի հանդիպումը հայաստանեան հասարակական կազմակերպութիւնների հետ

«Եւ նրանց ճշգրիտ թիւ եմ փոխանցել, որ այսօր ունենք 82 քաղաքատարկեալ, նաեւ տեղեկացրել եմ, որ Հիւսիսային Պողոտայում նստացոյց կայ եւ հրաւիրել ենք Եւրասիոնի օմբուդսմենին այցելել պողոտայ», - «Ա1+»-ի հետ զրոյցում ասաց Ժիրայր Սեֆրիւեանը: Իսկ ԱԺ նախկին փոխխօսնակ Կարապետ Ռուբինեանը որպէս «Քաղաքական բանտարկեալների եւ հալածեալների պաշտպանութեան» նորաստեղծ կոմիտէի անդամ, յաջողուել է մասնակցել թոմաս Համմարպերկի՝ հասարակական կազմակերպութիւնների հետ հանդիպմանը: «Ինձ հարց տալու իրաւունք չտրուեց, բայց ես ասացի թոմաս Համմարպերկին, որ դրսի պիկետաւորների կողմից եմ եկել եւ որ բողոքի ակցիան ոչ թէ Ձեր դէմ է, այլ Ձեզ օժանդակելու համար է, որովհետեւ Ձեր նախորդ գեկոյցը սկզբունքային էր եւ մեր պահանջն է, որ այդ սկզբունքայինութիւնը պահպանուի», - «Ա1+»-ին տեղեկացրեց Կարապետ Ռուբինեանը:

«ՊԱՏԵՅԷՔ ԵԹԷ ՓԱՍՏԵՐ ՈՒՆԻՔ»

Շարունակուած էջ 1-էն

ընդդիմութեան զանգուածային հալածանքների մի ամբողջ ալիք», - «Ազատութիւն» ռադիոկայանին տեղեկացուեցած է առաջին նախագահի մամուլ քարտուղար Լեւոն Չուրաբեան, որ աւելցուցած է. - «Այդ փաստաթուղթը շատ լուրջ ապացոյց է նրա, որ առանց որեւէ ամօթի ու առանց օրէնքի նկատմամբ որեւէ յարգանք ունենալու, մեր իշխանութիւնները սանձազերծել են ահաբեկումների մի ամբողջ կամպանիա ընդդիմութեան դէմ: Ուստի այս փաստաթուղթը ներկայացուեց եւ մեկնաբանուեց Տէր-Պետրոսեանի կողմից»:

Լեւոն Չուրաբեանի փոխանցմամբ՝ Տէր-Պետրոսեանը Համմարպերկին ներկայացուցած է նաեւ 82 քաղաքական բանտարկեալներու ցուցակ, ինչպէս նաեւ տեղե-

կանք մը, ուր առանձին-առանձին կը նշուի, թէ ինչպիսի քաղաքական հետապնդումներու եւ հալածանքներու կ'ենթարկուին այդ անձինք:

Համաժողովրդական շարժման ներկայացուցիչը յայտնեց, որ հանդիպման ժամանակ խօսուած է նաեւ Մարտ 1-2-ի իրադարձութիւնները ուսումնասիրող խորհրդարանական ժամանակաւոր յանձնաժողովի աշխատանքներու մասին. - «Մեր դիրքորոշումները ներկայացուել են Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմից: Այդ յանձնաժողովը բացարձակ վարկաբեկուած մարդկանցից կազմուած յանձնաժողով է, այդ մարդկանց անաչառութեան որեւէ ապացոյց բնութեան մէջ գոյութիւն չունի, իսկ հակառակի ապացոյցները բաւականին շատ են: Նման յանձնաժողովի աշխատանքին մասնակցելը ուղղակի անիմաստ գործ է»:

ՔՆՆՈՒԹԻՆՆԵՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐՈՎ

Շարունակուած էջ 1-էն

ուած ապացոյցների թույլատրելիականութիւնը»:

Մարդու իրաւունքներու Պաշտպանի գրասենեակը ուսումնասիրած է նաեւ յետընտրական շրջանին մի քանի մեղադրեալի կայանելու եւ անոնց կալանքի ժամկէտը երկարացնելու մասին դատարանի որոշումները: Դատարանը մեծ մասամբ հիմնաւորուած է համարել նախաքննութեան մարմնի միջնորդութիւնը՝ առանց պաշտպանական կողմին լսելու:

«Զալլի թուով որոշումներում կրկնուած են նախաքննութեան մարմնի ներկայացրած միջ-

նորդութիւնները, եւ հազուադէպ է [դատարանը] անդրադարձել պաշտպանական կողմի միջնորդութեան պատճառաբանութեանը», - աւելցուց Արմէն Յարութիւնեան:

Դատարանի ներկայացուած միջնորդութիւններուն մէջ յստակ նշումներ չեն եղած, թէ ինչ յանցանք կատարած է տուեալ մեղադրեալը. - «Նկարագրել են ընդհանուր իրավիճակը՝ չմասնաւորեցնելով անձի կոնկրետ գործողութիւնները»:

Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ դատարանները ընդհանրապէս չեն անդրադարձած եւ քննարկած կալանքի փոխարէն այլ խափանման միջոց ընտրելու հարցը:

ԸՆԶԱԿԵԱՆ ՄԱՍԻՍ

ԿԻԼ ՆԱԽ ՊԱՐՏԱԻՈՐ Է ԽՈՆԱՐՅԵԼՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ

ԱՀԱՐՈՆ ԾԽՐՏԸՄԵԱՆ

Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսյանի «նոր» քայլը հայ-թրքական յարաբերությունները խթանելու ուղղությամբ շատ առևելի կ'արժեքան ֆուլթայոլի մրցումը թուրքիոյ նախագահին կողքը նստելով վայելելու թուրքիոյ հանդէպ փայփայած պղատոնական սէրը:

Հայ-թրքական յարաբերությունները բարելավումը անհրաժեշտ է Միացեալ Նահանգներուն, Եւրոմիութեան եւ բնականաբար թուրքիոյ: Սարգսեան կը կատարէ երկխօսութեան սկսելու առումով Ուաշինգթոնի յանձնարարութիւնը: Ամերիկեան դիւանագիտութիւնը երկար ժամանակէ ի վեր կը փորձէ ամրապնդել կապերը թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ: Վերջին տարիներուն կարգ մը հասարակական կազմակերպութիւններ, ինչպէս՝ վերջերս USAID-ի տնտեսական հովանաւորութեան տակ Երեւանի մէջ կայացած «Համաշխարհային Մարտահրաշխանութիւնը» միջազգային խորհրդաժողովը, եւ կամ՝ 2006 թուականէն ի վեր «Eurasia Համագործակցութիւն» հիմնադրամի կողմէ համաշխարհայինացումի եւ տարածքային համագործակցութեան վերլուծական կեդրոնի հովանաւորութեան տակ ընթացող «Հայաստան-թուրքիա երկխօսութիւն եւ Համագործակցութիւն» ծրագիրը:

Ճիշդ է, որ այս խորհրդաժողովներն ու գիտաժողովները կը կրեն հասարակական բնոյթ, սակայն պէտք է հաշտող ընել անոնց ետին հետապնդող դիւանագիտական ու քաղաքական նպատակները: Երջանին կայողութիւնը եւ տնտեսական համագործակցութեան ոլորտը զարգացնելու շնորհիւ, Միացեալ Նահանգներ, Ատրպէյճան, թուրքիա իրականացուցած պիտի ըլլան դէպի Եւրոպա միջերկրականեան նաֆթի խողովակաշարներուն ապահով հոսքը, թուրքիա, կրնայ ապահովել դէպի Եւրոմիութիւն իր անդամակցութիւնը:

Թուրքիոյ պարագային, ուսումնասիրել 1915-ի իրադարձութիւնները, կ'ենթադրէ հիմնաւորել թրքական ժխտողականութիւնը, որ ցեղասպանութեան հարցին մէջ թուրքիոյ պաշտօնական թէզն է: Յատկանշական է, որ թուրքիոյ մէջ պատմաբանի կոչում կը շնորհեն այն անձերուն, որոնք պետական ժխտողականութեան պաշտպան կը ներկայանան պարզապէս, իսկ անոնք որոնք յանդգնութիւն կ'ունենան հրապարակաւ Հայկական ցեղասպանութեան օգտին արտայայտուիլ, գանոնք կը պիտակաւորեն իբրեւ «թուրք ազգի դաւաճան» ու կը կանգնեցնեն դատարանի առջեւ:

Հայկական ցեղասպանութեան հարցին քննարկումը միայն ժխտողական դիրքերու սպառումը չէ: Ան, միաժամանակ պիտի պարտաւորեցնէ վերանայիլ ժամանակակից թուրքիոյ հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթիւրքի հեղինակութեան, որովհետեւ վերջինս իր լեզուփոխութիւնները իրագործեց նոյնինքն երի-

տասարդ թուրքերու հետ համագործակցաբար, շրջապատուած՝ հայ ժողովուրդի դահիճներով:

Ապտուլա Կիլի ֆուլթայոլի մրցումը միասնաբար դիտելու հրաւերը եւ ցեղասպանութեան իրողութիւնը ստուգելու նպատակաւ պատմաբաններու յանձնաժողով ստեղծելու հրաւերը կասկածի տակ կը դնէ մեր ազգային ու պատմական ճշմարտութիւնը եւ ապա՝ բազմաթիւ երկիրներու կողմէ ցեղասպանութեան ճանաչման կայացած փաստը այլեւս ժամանակավրէպ կը դարձնէ ու՝ աւելորդ:

Սովորական տրամաբանութիւնը պիտի ըսէր, եթէ Հայաստանի Հանրապետութիւնը համաձայն է յանձնաժողով ստեղծելու ապացոյցի իրողութիւնը պարզելու նպատակաւ, սա կը նշանակէ, թէ Հայաստան՝ ապացոյցը կը դնէ կասկածի տակ: Այս պարագային Հայաստանի ինքնակոչ նախագահը կասկածի տակ կ'առնէ Հայկական ցեղասպանութեան փաստը, այսինքն՝ ան կ'ուրանայ Հայկական ցեղասպանութեան փաստը: Բայց եկուր տես, որ Սերժ Սարգսեան բախտաւոր է, որովհետեւ ան շրջապատուած է իրեն նման մտածողներու հսկայ բանակով: Եթէ այս յայտարարութիւնը Ֆրանսայի մէջ կատարէր, ան անմիջապէս քրէական պատասխանատուութեան հրաւիրուած պիտի ըլլար, այդ երկրին սահմանադրութիւնը խախտած ըլլալուն պատճառաւ: Իսկ ի՞նչ հետեւանք կրնայ ունենալ Հայաստանի կողմէ ցեղասպանութիւնը կասկածի տակ առնելու կամ ուրանալու երեւոյթը, զայն մինչեւ օրս ճանչցող երկիրները չփոթի պիտի մատնէ, պիտի պարզուի, որ անոնք դատաւարտած են բան մը, որ գոյութիւն ունեցած չէր... եւ կամ՝ որուն համար կասկած կը յայտնէ Հայաստանը, եղած է թէ՞ ոչ: Աշխարհի մէջ որեւէ պետութիւն չես այսու ճանաչման պահանջը չի կրնար քննարկման նիւթ դարձնել:

Բայց այս բոլորին մէջ, առաւել եւս ողբալին երկրի նախագահն է: Ան իրաւունք չունի կասկածի տակ դնելու կամ ուրանալու Հայկական ցեղասպանութիւնը: Փաստօրէն ան թուրքիոյ սահմանները բանալու դիմաց Հայկական ցեղասպանութիւնը ուրանալու պատրաստակամութիւն կը յայտնէ: Արդեօ՞ք ազգային գետնի վրայ մեղանշում մը չէ այս...: Հայկական ցեղասպանութեան փաստը ան կը վերածէ «սահմանը բացէք, փոխարէնը՝ քննիչ յանձնաժողով կը ստեղծենք, առեւտուրի առարկայ: Ինչո՞ւ Հայաստանի քաղաքական կառավարութիւնը, Ազգային ժողովը լուրջութիւն կը պահեն Սերժ Սարգսեանի գիտակցաբար առած քայլին նկատմամբ:

Սերժ Սարգսեան ու իր նման հայրենի բոլոր ղեկավարները պիտի իմանան, որ քաղաքական խոր նշանակութիւն ունեցող հարցերու լուծումը միամտութիւն է ձգել պատմաբաններու հայեցողութեան: Իսկ եթէ կարգը հասնի յանձնաժողովներու ստեղծման, յամենայնդէպս, պատմաբանները ամենեւին ալ առաջին շարքերու վրայ ըլլալու անհրաժեշտութիւնը չունին:

«ԱՐԱՐԱՏ» ԼԻԲԱՆԱՆ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՅՕԴՈՒԱԾԸ

Հայաստանի գործող նախագահ՝ Սերժ Սարգսյանը «The Wall Street Journal»-ին մէջ հրապարակած է յօդուած մը, ուր յայտարարած է, թէ պատրաստ է թուրքիոյ հետ յարաբերութիւնները կարգաւորելու ուղղութեամբ քայլերու ձեռնարկելու:

«Ես կ'առաջարկեմ նոր մեկնարկ եւ երկխօսութեան նոր հանգրուանի սկիզբ թուրքիոյ ժողովրդին ու կառավարութեան հետ՝ մեր յարաբերութիւններուն կարգաւորման ու սահմաններուն բացման նպատակով: Փետրուարին՝ իմ նախագահ ընտրուելէն անմիջապէս ետք իմ թուրք գործընկերս՝ Ապտուլա Կիլը գիտ շնորհաւորողներուն մէջ առաջիններէն էր, իսկ թուրքիոյ վարչապետ՝ Ռեճէպ Թալիփի էրտողանը ըսաւ, որ պատրաստ են նոր շրջանին նոր երկխօսութեան սկսելու», գրած է Սերժ Սարգսեան «Մենք պատրաստ ենք խօսելու թուրքիոյ հետ» վերնագրուած իր յօդուածին մէջ:

«Մեր երկիրներուն միջեւ բնական յարաբերութիւններու հաստատումը այլընտրանք չունի: Ես յոյս ունիմ, որ մեր կառավարութիւնները կը յաջողին անցնիլ նորաբաց դռան շեմը: Բնական քաղաքական յարաբերութիւններու սահմանումը մեզի թոյլ կու տայ յանձնաժողով ստեղծել բոլոր դժուար հարցերը համակողմանիօրէն քննարկելու նկատառումով: Այդպիսի կառուցուածքային յարաբերութիւններու բացակայութեան պարագային մենք չենք կրնար շօշափելի յառաջընթաց ակնկալել: Միայն անոնց շնորհիւ մենք կրնանք արդիւնաւէտ երկխօսութիւն սահմանել, որ կը շօշափէ նոյնիսկ ամենավիճելի պատմական հարցերը», յայտարարած է Սերժ Սարգսեանը:

«Ճիշդ այնպէս, ինչպէս Չինաստանի ու Միացեալ Նահանգներու ժողովուրդները խանդավառութեամբ կը վերաբերուին սեղանի թենիսի (բինկ-բոնկի) խաղին՝ մինչեւ իրենց ղեկավարութիւններուն կողմէ յարաբերութիւններու լիակատար կարգաւորումը, Հա-

յաստանի ու թուրքիոյ ժողովուրդին պիտի միացնէ ֆուլթայոլի հանդէպ սէրը: Այս երեւոյթը գիտ կը մղէ հետեւեալ հրաւերը ուղղել. Սեպտեմբեր 6-ին Երեւանի մէջ կը կայանայ ֆուլթայոլի աշխարհի առաջնութեան ընտրական հանգրուանի հանդիպումը՝ Հայաստանի ու թուրքիոյ ազգային հաւաքականներուն միջեւ: Ես նախագահ կիւր կը հրաւիրեմ այցելելու Հայաստան ու ինծի հետ միասին դիտելու խաղը: Այդ քայլով մենք կը նշանաւորենք նոր խորհրդանշական մեկնարկ մը մեր յարաբերութիւններուն մէջ:

«Հակառակ առկայ տարածայնութիւններուն ու փակ սահմանին, մեր ազգերուն միջեւ գոյութիւն ունին մշակութային, մարդասիրական ու մարզական կապեր: Ճիշդ այդ պատճառով, ես կը կարծեմ, որ Հայաստանի ու թուրքիոյ հասարակ բնակիչները կ'ողջունեն նման ժեստը եւ կը տօնեն այն օրը, երբ կը բացուին սահմանները:

«Այդ ճանապարհին վրայ կրնան պատահիլ քաղաքական խոչընդոտներ՝ երկու կողմերէն ալ: Հակառակ անոր, մենք պէտք է խիզախութիւն ունենանք, որ սկսինք գործել այսօր: Հայաստանը ու թուրքիան պէտք է յաւերժ թշնամիներ մնան:

«Հայաստանի ու թուրքիոյ համար առևելի բարենպաստ ու փոխշահաւէտ ապագայ, Արեւելք-Արեւմուտք պատմական միջանցքին բացումը Եւրոպայի, Կասպից տարածաշրջանի եւ մնացեալ աշխարհին առջեւ: Ահա այն նպատակները, որոնց մենք կրնանք եւ պէտք է հասնինք», յայտարարած է Հայաստանի նախագահը՝ «The Wall Street Journal»-ին մէջ հրապարակուած յօդուածին մէջ:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
\* \$50,00 for USA
\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.
Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax : -----

Չեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՏՆՏԵՍԱԿԱՆ- ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՈՒԺԱՅԻՆ (ENERGY) ՏԱԳՆԱՊԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ

Վերջին շրջաններուն մեր ակնարկը կեդրոնացուած կ'ըլլար քաղաքական, յատկապէս ընտրական խնդիրներու վրայ, եւ այս, հասկնալիօրէն՝ քանի որ 2008 թուականը այս մեծ հանրապետութեան համար, նախագահական ընտրութեան տարի մը կը հանդիսանայ: Սակայն, այս ըլլալով հիմնական հարց մը, պէտք է ամենեւին ստորագնահատել կամ թերագնահատել միւս հարցերը, որոնք նոյն պէս մտահոգիչ են, եւ կը կարօտին, եթէ ոչ լուծման, գէթ լուրջ ուշադրութեան:

Այսպէս, երկար է շարք երկրի դիմագրաւած տագնապներուն, որոնք վաղուց անցած են սոսկական հետաքրքրութեան սահմանները, եւ դարձած լուրջ մտահոգութիւններ ժողովրդային շրջանակներուն համար, եւ ոչ միայն մտահոգութեան, այլ ուղղակի տագնապի վերածուած: Այնքան մը որ քիչ մը ամէն մարդ, եւ կազմակերպութիւն, անհատական թէ պետական սկսած են լրջօրէն արտայայտուիլ, եւ լուծումներ փնտռել կամ առաջարկել:

Նախ սկսինք այս երկրի ուժային տագնապէն, որ ոչ թէ կը թուի, այլ իրապէս կը մտահոգէ երկրի քաղաքացիները: Այս տագնապին լաւագոյն փաստը քարիւղի «կալոնին» գինի արագ եւ անկաշկանդ յաւելումն է: Ներկայիս այս գինը հասած է 4.5 տոլարի եւ նախատեսութիւններ կան որ կրնայ հասնիլ մինչեւ 7-8 տոլարի, ինչպէս Եւրոպայի եւ Աւստրալիոյ պարագաներն են: Այս կը նշանակէ որ քարիւղի տակաւին գինը, որ տակաւին քանի մը ամիսներ առաջ, կը գնահատուէր, եւ միջազգային շուկայի վրայ կը ծախուէր 50-60 տոլարի տակաւը, ներկայիս հասած է 140-145 տոլարի, եւ երթալով կը բարձրանայ:

ԻՆՉՊԷՆՍ ՊԱՏԱՀԵՅԱԻ ԱՅՍ ՍՂՈՒԹԻՒՆԸ

Իրագեղները կը յայտնեն որ քարիւղի արտադրութիւնը, տակաւին անարգել կերպով տեղի կ'ունենայ, եւ անոր արտածումն ալ, դարձեալ անարգել տեղի կ'ունենայ: Իսկ, գարմանալիօրէն, արտադրումի երկիրներու մօտ, քարիւղի տակաւին գինը ծիծաղելիօրէն ցած է: Ուրեմն, ինչպէ՞ս այս սղութիւնը մէջտեղ եկաւ: Մանաւանդ, ինչպէ՞ս կարելի է գայն հակակշռել: Այս հարցումներուն պատասխանելէ առաջ, նկարագրութիւն մը կրնայ

օգտակար ըլլալ: Սէնտական Արաբիոյ թագաւորը, Ապտալլա, իր մօտ կը կանչէ քարիւղի տագնապով շահագրգռուած կողմերը: Առաջին վագոնները ամերիկացիները կ'ըլլան: Ամերիկացիք Ս. Արաբիան կը նկատեն իրենց վստահելի բարեկամները: Հակառակ անոր որ Սէնտականները խոստացան փոքրիկ յաւելում մը կատարել քարիւղի արտադրութեան, գիները մնացին նոյնը, եւ այս սպաքոյց մըն էր որ Ամերիկացիները լման կ'անգիտանային հիմնական-տնտեսական տագնապին պատ-



ճառները: Եթէ նկատի պիտի առնենք քարիւղի արտադրողներու եւ սպառողներու փոխադարձ շահերը, ասոնք տրամագծօրէն իրարու հակոտնեան կ'ընթանան: Ապտալլա թագաւորին խոստացած արտադրութեան քանակը, ինչ որ ալ ըլլայ, շատ քիչ ազդեցութիւն պիտի ունենայ քարիւղի տակաւին գինի վրայ, քանի որ անոնք, արտադրողները, շատ լաւ գիտեն գիները «դասաւորել» գնողին համեմատ: Այլ խօսքով, Ամերիկան ինքզինք կը դնէ ծիծաղելի վիճակի մը մէջ, քանի որ նախագահական երկու թեկնածուներն ալ ուղղակի ծիծաղելի առաջարկներ կ'ընեն քարիւղի տագնապին վերաբերեալ: Ծօն Մ. քթէյն կ'առաջարկէ Ամերիկայի անկախութիւնը ապահովել արտադրողներէն, նաեւ առաջարկել 20 սենթի նուագում մը, հարկային իմաստով, կարճ ժամանակի մը համար: Իսկ վերջերս ալ, համաձայն կը գտնուի նոր պեղումներ արտօնել Ամերիկայի հողատարածքին վրայ, աշխատանք որ առնուազն տասնեակ տարիներ կ'ուզէ արդիւնքներ տալու համար: Ուրեմն, Ծօն Մ. քթէյնի առաջարկները դատարկ են տագնապի անմիջական լուծման համար: Անդին, Ի՞նչ կ'առա-

ջարկէ Օպաման: Տեմոքրատներու նախագահութեան թեկնածուն քարիւղի գինի արուեստական աճումին համար, պատասխանատու կը գտնէ «չարաշահողները» (speculators), առանց կարենալ ճշգրտօրէն ցոյց տալու թէ որո՞նք են այս չարաշահողները – արտադրողները, քարիւղի ընկերութիւնները, միջազգային տնտեսական մեծ հիմնարկները, եւ այլն: Անդին կայ նաեւ մէկ ուրիշ հանգամանք որ կը վերաբերի «պահանջքի եւ մատուցման» (supply and demand) սկզբունքին: Վերջին տարիներուն քարիւղի պահանջքը խիստ մեծ ուստում ստացած է, յատկապէս Չինաստանի եւ Հնդկաստանի նման մարդկային մեծ

լու տագնապէն դուրս գալու համար: Ամերիկացիք վարժուած են շուայութեան, եւ փոքր «անհանգստացուցիչ» պարագայ մը գիրենք իսկապէս կը նեղէ կամ անհանգիստ կ'ընէ: Առնենք տուներու եւ շէնքերու շեռուցման կամ գովազման օրինակները: Նաեւ ինքնաշարժերու պարագան: Այս կը կարօտի ելեքտրականութեան հոսանքի չարաչար գործածութեան, որ յաճախ անպէտ վատնում մը կը հանդիսանայ:

Տեղական լուծումներու շարքին կը գտնուին հիւլէական ուժային կայաններու գործածութիւնը, ելեքտրական հոսանքի արտադրութեան համար: Ֆրանսայի նման երկիր մը շատ աւելի կայաններ ունի քան Ամերիկան, որ «3 mile is land» կոչուած կայանի մը պայթումէն սարսափած, ուղղակի վախ կ'ապրի հիւլէական ուժի դիմելու:

Արեւային հոսանքի արտադրութիւնը, մանաւանդ Քալիֆորնիայի նման առատ արեւ ունեցող նահանգէ մը ներս, կրնայ մեծապէս նուազեցնել «generator»ներով ձեռքբերուած ելեքտրական հոսանքը:

Պուշի իշխանութեան յանցանքներէն մէկն ալ Սեպտեմբեր 11-ի ահաբեկչութենէն ետք, անհրաժեշտ քայլերը անտեսելը եղաւ քարիւղային օգտագործման համար: Պուշ իրաքեան պատերազմի դիմեց իբրեւ թէ քարիւղ ապահովելու համար, եւ սակայն արդիւնքը ճիշտ հակառակը պատահեցաւ:

Անդին կայ տակաւին նոր տեսակի ինքնաշարժերու պարագան, որոնք «hybrid» կը ճանչցուին, կէս-քարիւղ եւ կէս ելեքտրականութիւն, որոնք շատ նպատակայարմար կրնան ըլլալ քաղաքային տեղափոխութեան համար: Իսկ «SUV»ներու շրջանը վստահաբար վերջացած կարելի է նկատել, տրուած ըլլալով անոնց քարիւղային գործածութեան «անկուշտ» հանգամանքը:

Այս բոլորին վրայ, եւ աւելի կարեւոր թերեւս, քարիւղային մոլութենէն ձեռքազատուելու համար, անհրաժեշտ է, առ այժմ երկու քայլերու.

ա. Ազգային քարիւղային պաշարի աւելի «ազատ» օգտագործումը, ժողովուրդին բեռը թեթեւցնելու համար: Ըսողներ կան որ Ամերիկան երկար տարիներու բաւարար քարիւղային պաշար (reserve) ունի, նոյնիսկ եթէ դադարի Մերձաւոր Արեւելքէն քարիւղ ներածելու: Այս մասին արդէն պահանջողներ կան Սենաթին եւ Ներկայացուցիչներու Տունէն ներս:

Բ. Սկսիլ քարիւղային հետա-

Շարք էջ 19

համախմբում ունեցող երկիրներու մօտ, որոնք շնորհիւ իրենց ճարտարարուեստական յառաջդիմութեամբ, պահանջը ունին քարիւղային արտադրութեանց:

Ամէն պարագայի, քարիւղի գինը շատ աւելի սուղ եղած է Եւրոպայի երկիրներու եւ Աւստրալիոյ մէջ, նոյն նկատումներով: Ինչ կը վերաբերի Ամերիկայի մասին, աշխարհի տարբեր երկիրներու ունեցած կարծիքին, այս վերջինները համոզուած են որ Ամերիկան, ինչ կը վերաբերի քարիւղային իր քաղաքականութեան, կատարեալ անճարակ եւ նոյնիսկ միամիտ երկիր մըն է, եւ միայն ինքզինք ունի քննադատելիք եւ դատապարտելիք: Փոխանակ Պուշին Ս. Արաբիային թագաւորէն ինդրելու որ աւելցնէ քարիւղի արտադրութիւնը, եւ գրեթէ մերժուի, կարող էր իր իշխանութիւնը մղելու քարիւղի «մոլութենէն» ձեռքազատուելու, եւ փնտռելու տեղական միջոցներ տագնապի լուծման համար:

Ի՞նչ կ'ԱՄ ԻՆՉԵՐ  
Կ'ԱՌԱՋԱՐԿՈՒԻՆ  
Ընդհանուր կերպով, Ամերիկան պէտք է պատրաստուի գոհութիւն կամ գոհողութիւններ ընե-

THE QUALITY AND SAFE CHOICE...  
**AGBU PASADENA HIGH SCHOOL**  
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104  
(CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET)  
**2008-2009 SCHOOL YEAR OPEN ENROLLMENT GRADES: 9-12**  
COLLEGE PREPARATORY ACADEMIC PROGRAM HONORS & AP LEVEL INSTRUCTION  
FOR MORE INFORMATION, PLEASE CALL 626-794-0363

ՇԱՅ ԴՊՐՈՑ

«ՄԵՐՏԻՆԵԱՆ» ՀԱՅ ԱԲԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 2007-2008 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՀՈՒՆՁՔԸ

Տարեվերջ է դարձեալ. եւ ինչպէս հնձուորը՝ մոռցած իր տքնաշան աշխատանքը՝ կը հրճուի քաղուելու պատրաստ իր հունձքին դիմաց, այնպէս ալ կրթական մշակներու, ինչպէս նաեւ անձնագոհ ծնողներու սրտերը լի են անհուն հրճուանքով ի տես շրջանաւարտներու հունձքին:

Արդարեւ, յաճախ անհաւատալի կը թուի տեսնել, որ երէկուան երեխան մեծցած, հասունցած, գիտելիքներով ու իմաստութեամբ գինուած, կ'ուղղուի դէպի անծանօթ վայրեր...

Այս պատկերը տարածուած էր «Մերտինեան» Հայ Աւետարանական վարժարանի նախակրթարանի եւ միջնակարգի բաժիններու վկայականներու բաշխման հանդիսութեան ընթացքին, որ տեղի ու-

ձեռամբ տնօրէն Յովսէփ Ինճէճիքեանի, աշակերտները ստացան իրենց վկայականներն ու մրցանակները:

Օրուան առաջին պատգամաբերն էր հոգաբարձութեան ատենապետ սօքթ. Հրայր Աթիքեան:

Ռապըթ Քենէտի մէկ խօսքը իր պատգամին նիւթն էր. «Մեր ապագան նուէր մը չէ, այլ՝ իրագործում մը»: Ան իր խօսքը շրջանաւարտներուն ուղղելով ըսաւ. «Ապագան նուէր չի տրուիր, այլ կը ստացուի անհատի մը ջանքերով, աշխատանքով»:

Աշակերտական երգչախումբը, ղեկավարութեամբ Վիքթորիա Աբրահամեան-Էլիասիի՝ ելոյթ ունեցաւ փունջ մը հոգեւոր եւ հայկական ժողովրդական երգերով:

Երկրորդ պատգամաբերն էր վեր. ձէյսըն Մաթոսեանը: «Այսօր



Միջնակարգի աւարտականները

կատարեց վկայականներու եւ մրցանակներու բաշխումը:

Տնօրէնին յանձնուեցաւ ճիշդ կարգի շրջանաւարտներու կեանքէն, շրջանակի մէջ առնուած, նկարներու հաւաքածոյ մը եւ ծաղկեկողով մը:

Հանդիսութիւնը լի էր անակնկալներով: Յատուկ գնահատանքի արժանացաւ Ռիթա Մէնէշեանը, որ կամաւոր կերպով յանձն առած էր վարժարանի վարկաւորման համար տարուած աշխատանքներու համադրումը: Վարկաւորումի կիսաշրջանի այցելութիւնը յաջողութեամբ պսակուեցաւ Ապրիլին: Գնահատանքի արժանացաւ նաեւ ուսուցչուհիներէն Սանտրա Մաղաքեանը, որ 12 տարիներու բոլորանուէր ծառայութենէ ետք, կը դադրի աշխատանքէ:

Ծնողա-Ուսուցչաց Մարմնի ատենապետուհի Տի Զորլեան, տարեկան ձեռնարկներուն հասոյթին երկրորդ բաժինը՝ 45,000 տոլարի չէքը յանձնեց հոգաբարձութեան ատենապետին:

Ճիշդ կարգի շրջանաւարտներու հոգաբարձութեան կողմէ նուէր տրուեցան Անահիտ Մէյմարեանի «Քարերը կ'աղաղակեն» գիրքէն

մէկական օրինակ եւ Մարգարիտ Եարտըմեանի կողմէ՝ ասեղնագործ խաչեր: Տնօրէնը նաեւ կարգաց Քալիֆորնիոյ խորհրդարանի անդամ Փօլ Գրիգորեանի շնորհաւորական նամակը:

Պրն. Ինճէճիքեան իր փակման խօսքին մէջ նշեց ուրախալի երեւոյթ մը՝ WASCի կողմէ «Մերտինեան» վարժարանի 6 տարուան վարկաւորումի հաստատումը. նաեւ՝ դպրոցը նորակառուց շէնքով մը օժտելու ծրագրին արտօնութիւնը՝ քաղաքապետութեան կողմէ: Ապա, շրջանաւարտներուն ուղղելով իր խօսքը, թելադրեց ըլլալ հաւատարիմ քաղաքացիներ, արդար վարմունքի տէր անձնաւորութիւններ, սիրելի հայ լեզուն ու ազգը եւ մեր նախահայրերուն հաւատքին կառչած մնալ: Վեր. ձէյսըն Մաթոսեանի օրհնութեան աղօթքով վերջ գտաւ հանդիսութիւնը:

Մանկապարտէզի հանդէսը տեղի ունեցաւ Յունիս 18ին: Շրջանաւարտ եղան 24 աշակերտներ:

«Մերտինեան» վարժարանին մասին յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել (818) 907-8149 թիւին:



Նախակրթարանի աւարտականները

նեցաւ Յունիս 20ին, վարժարանի հանդիսարահին մէջ:

Հանդիսութիւնը սկսաւ նախակրթարանի 15 եւ միջնակարգի 15 աւարտականներու մուտքով առաջնորդութեամբ իրենց դաստիարակներու՝ Սօնա Գասարճեանի եւ Աշխէն Իսթենճեանի: Պետական եւ ազգային քայլերգներու երգեցողութենէն ետք, Միացեալ Հայ Աւետարանական Եկեղեցիի հովիւ՝ վեր. ձէյսըն Մաթոսեան կատարեց բացման աղօթքը: Նախակրթարանի շրջանաւարտները արտասանեցին «Our Graduation» բանաստեղծութիւնը: Ռաֆֆի Զարխտեան ուղերձ կարդաց հայերէնով եւ Մելլոնի Արթինեան՝ անգլերէնով: Ապա,

«Մերտինեան»էն շրջանաւարտ կ'ըլլաք ու պիտի երթաք երկրորդականի աշակերտներ ըլլալու այլ դպրոցներու մէջ:

Երկրորդականը վախ կը պատճառէ, որովհետեւ այնտեղ փորձութիւններու պիտի հանդիպիք:

Յիսուսի շուքին մէջ մնացէք եւ անոր վստահեցէք», ըսաւ ան:

Միջնակարգի շրջանաւարտները իմբովին արտասանեցին Գէորգ Էմինի «Երգ կուռնկի Մասին»:

Արմինէ Սանոսեան կարդաց ուղերձը՝ հայերէնով եւ Անժէլ Ապաճեան՝ անգլերէնով:

Շրջանաւարտները գիրար ներկայացուցին հաճելի կարճ նկարազրութիւններով: Ապա, տնօրէնը

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ABA Insurance Services logo and 33th Anniversary banner. Text: Life, Health, Group Health, Disability, Long Term Care. Blue Cross of California, Blue Shield of California. 1975-2008. 33th ANNIVERSARY.

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է

ԵՐԲԵՔ ՈՒԾ ՁԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205 E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



# ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

## ԴՈԿՏ. ՏՈՐԱ ՍԱՔԱՅԵԱՆԻ «ԱՐԵՒԵԼԱՅԱՅԵՐԷՆԸ ԱՆԳԼԻԱԽՕՍ ԱՇԽԱՐՀԻ ՅԱՍԱՐ» ԴԱՍԱԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵԱԸ



Ուրբաթ, Մայիս 16, 2008, երեկոյան ժամը 8:00ին, Կլէնտէյլի Հանրային Գրադարանի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ պրոֆ. դոկտ. Տորա Սաքայեանի «Արեւելահայերէնը անգլիախօս աշխարհի համար» դասագիրքի շնորհանդէսը, որուն ներկայ գտնուեցան մեծ թիւով դաստիարակներ, ուսուցիչներ եւ Կլէնտէյլի հայ համայնքի տարբեր խաւերու ներկայացուցիչներ: Երեկոյթը համատեղ կազմակերպուած էր ՀՀ Լոս Անճելըսի Գլխաւոր Հիւպատոսութեան եւ Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելըսի մասնաճիւղին կողմէ:

Անիրաւ շահը դարձած է մացառուտի գագան մը, որ կ'ուզէ խեղդել իր մրցակիցը, շահերուն կղաչէ ու կկասեցնէ իր յաջողութիւններուն արշաւը:

Գործառնութիւնները կը կատարուին աններելի միջոցառումներով եւ շահագործումներով, ուրկէ կը բացակայ արդարասիրութիւնը:

Ոչ մէկուն հոգն է, թէ ինչ կորուստ կը պատճառէ յաճախորդին եւ ինչ բարոյական անկում իր արժանապատուութեան:

Այս նիւթապաշտ եւ ընչաքաղց վաճառականները քաղաքներու մէջ գայլերու հոգեբանութեամբ կը շարժին ու իրենց կարգախօսն է, ՇԱՀԱԳՈՐԾԷ ՇԱՀԱԳՈՐԾ ՈՒԵԼԷ առաջ:

Սակաւաթիւ մարդոց մէջ անկեղծութիւնը կը շնչէ հաւատքի գագացումով, որոնց գործառնութիւններուն մէջ չեն նկատեր սուտին միջամտութիւնը:

Այս ազատ ու անձարձակ երկրին մէջ, Կրեւտաի շրջանցիչ դիրքերուն վրայ ճառագայթելու համար, շատ են շահաբեր պատեհութիւնները, որոնցմէ կ'օգտուին միայն անոնք, որ մասնագիտացած են խաբէութեան մէջ եւ գիտեն ուր պահուած է սատանային գանձը, որ քողագերծեն:

Առեւտուրի մէջ պարկեշտութիւն ցուցադրող մարդիկ, հարթած են անանկութեան ճամբան եւ մատնուած անվերականգնելի դժբախտութեան:

Կեղծաւորներու եւ գեղծարարներու աշխարհի մէջ կ'ապրինք ու կը տառապինք: Պատահած է, որ յաճախորդ մը՝ վաճառատունէ մը ներս մտնէ եւ չշահագործուած ու չխաբուած դուրս ելլէ:

Մարդ մը, որ ամբողջ մարմնով մխրճուած է ցեղաշուրճում մէջ եւ մոլութիւններով յագուրդ կուտայ իր անկասելի ցանկութիւններուն, գեղնամած սողունէ մը տարբեր չէ, իր ապրած կեանքով:

Ներկայ շփոթ ու խառնակ ժամանակներուն, մարդկային կեանքին վարկը ու որակը իջած է երկրէն ալ ցած, անասունի մակարդակին, չի վախնար, ոչ մեղանչելէ եւ ոչ կարմրելէ, իր գործած կամայ ակամայ շահատակութիւններէն:

Մարդիկ գերի եղած են կիրքերու եւ մոլութիւններու, հոն ուր պէտք է ամչնան չեն ամչնար եւ հոն ուր պէտք է ամչնան՝ կ'ամչնան:

Ինչ որ հաճելի է իրենց մարմնոյն համար, շուքորէն կը մսխեն թէ իրենց ժամանակը եւ թէ հարստութիւնը:

Այսօր՝ ծածկուած ոչինչ կը տեսնենք մարդուն վրայ: Ամէն ինչ մերկապարանոց կը պարզուի մեր աչքերուն առջեւ: Ալ վարժուած ենք չգայթակղիլ անսովոր ու ամօթալի մերկութիւններու հանդիսատես ըլլալէ:

Ոչ ոք ամօթխածութիւն կը գզայ ու կը կարմրի իր գործած ծանրակշիռ մեղանչումներէն:

\* \* \*

Ճշմարտութեան համար պայքարողը՝ կանգ չ'առնէր, ո'չ մէկ անյաղթելի արգելքի առջեւ: Լաւ կը հասկնայ, թէ մաքառումներու ընթացքին կանգառումը, կը նշանակէ նահանջ ու յետադիմութիւն:

Կիրքերը եղեր են բուռն կամ գուսպ՝ կը բարացուցեն մարդուն մէջ որջացած գագանը որ պէտք է խեղդուի: Ճակատամարտ մըն է ասեղ ու անկասելի: Որմ է յաղթական դուրս կուգայ պայքարողը դափնեպսակուած:

Երկրի վրայ այսօր ամէն բան ակներեւ, ոչինչ կայն թագնուած: Սուտը, կեղծիքը, շարաշահութիւնը, շողորթութիւնը, գրպարտութիւնը եւ բամբասանքը կը գործեն սանձարձակ եւ անպատկառ ազատութեամբ:

Հանրային ամպիրոնները, պատուոյ սեղանները, առանձնաշնորհեալ աթոռները գրաւած են այնպիսի մարդիկ, որոնց վիճելի բարոյակաւնը՝ թոյլ պիտի չտար, որ անոնք երեւան բազմութիւններու մէջ:

Իրաւունք ունին ցաւ գզալու իրենց բարեգործութիւններով համբաւուած բարերարներ, երբ համար

նոյն մակարդակի վրայ կը տարփողուին վարք ու բարքով վանողական սովեստներ, որոնց ոչ ներկան եւ ոչ անցեալը կը պատուեն իրենց տարակուսելի բարոյականը:

Դուք տեսե՞ր էք, որ ստախօսը ուղղէ իր բնութիւնը, գեղծարարը՝ իր ցեխամոյն միտումը, շողորթը՝ իր նողկալի ունակութիւնը, անիրաւը՝ իր շարաշահութիւնը, գրպարտիչը՝ իր անգտանելի վարքը ու բարքը:

Ձէք տեսած ու երբեք պիտի չտեսնէք, որ վերոգրեալ մզլուտ նկարագիրներէն մէկը կամ միւսը կը հրաշափոխուի:

Հանրութեան մարմնոյն կառչած այս արիւնախում սցրուկները իրենց կեանքին երկար տարիները կը սպառեն բանտախուցերու մէջ, ուրկէ դժբախտ օր մը դուրս կուգան մեղքերով ակաղձուն դագաղով:

Կսկծալի է հաստատել, որ մարդոց մեծամասնութեան բռնած ու հետեւած ուղին տարբեր չէ անոնց անորակելի կենցաղէն: Ձանազանութիւն չկայ կեղծաւորին ու անկեղծին գործելակերպին միջեւ: Երկու դասակարգերն ալ անիրաւ շահերու տիրանալու համար համանոյն մեղքերով կը բարացուցուին սատանային հրահանգներուն հպատակելով:

Ափսոս այն մարդուն, որ սատանային դրամանիշին տիրանալու համար կ'ընդունի անոր քաղաքացիութիւնը եւ դժողքը կ'ընտրէ որպէս իր յաւիտեանական օթեւանը: Ալ անոր համար չկայ Աստուած, չկայ երկինք, չկայ փրկութիւն եւ չկայ անմահութիւն:

Վաղնջական ժամանակներուն աշխարհի բարոյական կլիման այսօրան պէս նեխած չէր:

Ամօթխածութիւնը եւ բարեպաշտութիւնը աստղանիշ շրջանում կը ճառագայթէին մարդոց կերպարին վրայ: Կիները մերկապարանոց չէին տեսներ հրապարակներու վրայ եւ շուկաներու մէջ իրենց կիսաբաց կուրծքերով:

Մարդիկ արբւած շուքլ ու շուքլու համագիշերային խորհրդանշաններու մէջ, ամօթը եւ մերկութիւնը կը հռչակեն...ԾԱՓԱՀԱՐԵԼԻ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ:

Հարցնենք... Ո՛ւր են ճառագայթող մտատիպարները, որ ուղեցոյց ըլլան այս մոլորած գանգուածներուն, ինչո՞ւ անոնք եւս՝ չեն աղմկեր հրապարակը, որ ցոյց տան իրենց քաջութիւնը եւ բարոյական վսեմութիւնը...:

Բարի ու պարկեշտ մարդիկ եղած են վախկոտ ու վարանոտ, չեն համարձակած մոլորածներուն հետ

ճակատիլ, նախընտրած են իրենց պաղարին դիրքերուն վրայ մնալ եւ ազատ թողուլ չարը, որ անկաշկանդ արշաւէ:

Ներկայիս՝ ամէն տարիքի մարդիկ՝ դարձած են եսական ու ինքնիշխան, Ոչ մեծի խրատ կը լսեն եւ ոչ վերէն եկած հրահանգ: Օրէնքին ազդարարութիւնները, որքան ալ կարծր ըլլան, չեն հրաժարին իրենց կապարացած սովորութիւններէն:

Նետենք ակնարկ մը, փոքր հասարակութիւն կոչուած սա ընտանիքին վրայ, որ կը ցուցադրէ կազմալուծուած պատկեր մը, ներքուստ ու արտաքուստ անդամահատուած աններդաշնակութիւն մը: Հին եւ նոր սերունդներու միջեւ ողբալի հակամարտութիւն, մերթարիւնալի բախումներով: Ձաւակները ըմբոստ ու ապերասան, կառչած նորապաշտ կուրքերու եւ ծնողները իրենց բրածոյ աւանդութիւններով եւ խրատներով՝ ժամանակավրէպ գոյութիւններ:

Մեր ծնողները, կ'ըսեն՝ այս սիրոյ ծնունդները, չեն հասկնար մեզ եւ ոչ ալ մեր ժամանակի պահանջները: Ձենք կրնար անոնց հասկացնել, թէ ներկայ կեանքը հակառակ է սահմանափակումներու, բարոյական եւ կրօնական կաշկանդումներու:

Նորագոյն սերունդի հաճոյապաշտ եւ սոսմաշէն սովորութիւններէ ուժացած ներկայացուցիչները, ամէն հասարակութեան մէջ մեծամասնութիւն կը կազմեն, վարք ու բարքով յանձնապատան ու ապերասան: Ամէն բանի ծայրայեղութիւնը կը սիրեն ու չեն գգաստանար եւ բարեփոխուիր, որքան ալ խատորէն մտրակուին իրենց կամակոր համոզումներէն:

\* \* \*

Յիսուս, ոչ մէկ գիրք գրեց, բայց աշխարհի բոլոր գրադարանները նեղ կուգան իր մասին գրուած գիրքերը պարունակելու:

Ան՝ երբեք դպրոց մը չ'իմնեց, բայց բոլոր դպրոցները չունեցան այնքան աշակերտ, որքան ԱՆ ունեցաւ:

Ան՝ չկատարեց բժշկի պաշտօնը, բայց այնքան հոգիներ բուժեց, որքան մարմիններ բուժեցին բժիշկները:

Ան՝ չեղաւ գորաբաժնի մը առաջնորդը, բայց գորավարէ մը շատ աւելի կամաւորներ ունեցաւ:

Ան՝ յայտնուեցաւ մարդոց մէջ կատարեալ մարդ մը եւ կատարեալ Աստուած մը ու հռչակուեցաւ Աստուածորդի:

Ան՝ հիմա կը քալէ մեր առջեւն ու մենք կ'երթանք իր ետեւէն եւ կուտայ անսխալ առաջնորդութիւն մեր կեանքին ու ճակատագրին:

Advertisement for Atlantis Restaurant and Night Club. Features a woman in a pink belly dancing outfit, a hookah, and a group of dancers. Text includes: ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB, FRIDAY NIGHTS AT ATLANTIS ARABIAN NIGHTS, ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ. EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHALAH DANCERS. authentic cuisine, full hookah bar, VIP membership, full cocktail bar, live belly dancing, live music and DJ. ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB, 626.449.4599, 162 N. SIERRA MADRE BLVD. PASADENA, CA 91107.

ԳԻՐՔԵՐՈՒ ՇԵՏ

ԷՋԵՐ ԵՒ ՆԻՒԹԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ (Ա. ՅԱՏՈՐ)
ՀԵՂԻՆԱԿ՝ ՊԵՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ
ԱՆԹԻԼԻԱՍ 2007

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆՆԵԱՆ

Այս գիրքը վաստակ ունեցող գրագետի մը քաղհանին առաջին հատորն է: Ինչ լաւ է որ Պէպօ Սիմոնեան կողքի մը տակ համախմբած է տարիներու ընթացքին իր հրատարակած յօդուածները: Այստեղ, աւելի շօշափելի եւ իրաւ դարձած են ինչ որ տարտղուած էր հայ մամուլի էջերուն վրայ:

Գիրքը կը վկայէ, որ Գալուստ Կիւլաքնիկեան Հիմնարկութեան հրատարակութիւնն է այս գործը: Հիմնարկութիւն, որ օրհնութեան մը վերածուած է հայ գիրքին համար, երբ կը տեսնենք որ Սփիւռքէն ու Հայրենիքէն բազմատասնեակ հրատարակութիւններ լոյսին եկած են շնորհիւ այս հաստատութեան:

Գիրքը յառաջաբան չունի: Պէտք կ'արդեօք, երբ ամբողջ այս գործը ընդարձակ յառաջաբան մըն է (367էն) հայ մշակոյթը ներկայացնելու ճամբուն վրայ:

Հայ գրականութեան բազմաբնուէր երկրպագողներէն մին ըլլալով Պէպօ Սիմոնեան այս գիրքին մէջ հրատարակած 28 էջերու վրայ տարածուող առաջին նիւթը «Մեհեան»ի հրատարակութեան հարցն է ուր լրջութիւնը կը մըրցի իրաւախոհութեան հետ:

Ուսումնասիրութիւնեան առաջին իսկ տողերով երբ հեղինակը կը ներկայացնէ մեր գրականութեան նախա«Մեհեան»ի շրջանը կ'ըսէ. «Արեւմտահայ գրականութեան մէջ գեղապաշտ ձգտումները՝ իբր գրական գոյնութեան եւ Տոգեխառնութեան ընկալում՝ արդէն տիրական ներկայութեամբ կ'արտայայտուէին արձակի թէ բանաստեղծութեան մէջ»:

Բայց քիչ մը վարը հեղինակը կը յաւելու. «Չփոթել ձգտումնաւոր գրականութեան հետ, որ որպէս արուեստի ուղղութիւն կը հակադրուի գեղեցիկի ըմբռնումին»: Բայց միթէ՞ այդպէս է, միթէ ձգտումնաւոր գրականութիւնը կը հակադրուի գեղեցիկին անշուշտ շեշտը դնելով հանդերձ բովանդակութեան վրայ: Միթէ Արփիար Արփիարեանի ձգտումնաւոր «Ոսկի Ապրիլ»-ը կամ Եղիշ Զարեանի «Ամբոխները ինչպարուած»-ը գեղեցիկին պաշտամունքէն գուրկ են: Կրնան ըսել նաեւ որ Ռուբէն Սեւակ ձգտումնաւոր գրականութիւնը մը մշակած ըլլալով հեռու էր գեղեցիկին պաշտամունքէն երբ իր գործերը հայ ժողովուրդը կը հրաւիրէին արթնութեան, զգոնութեան թշնամիին նիւթած դաւերուն հանդէպ: Վարուժանն անգամ տեղ-տեղ ձգտումնաւոր չէ՞ միթէ իր հայրենաշունչ բանաստեղծութիւններուն մէջ:

Անշուշտ, հեղինակը իրաւացի մէջբերումներ կատարելով Յակոբ Օշականէ ու Դանիէլ Վարուժանէ կը հաստատէ գեղապաշտութեան ներկայութիւնը Արեւմտահայ Գրականութեան մէջ, հասնելով «Մեհեան»ի ծնունդին ու հրատարակութեան 1 Յունուար 1914ի, տնօրէն խմբագրապետ ունենալով Կոստան Զարեանը, խմբագիրներ՝ Գեղամ Բարսեղեան, Յակոբ Քիւֆէճեան (Յ. ՕՇական): 1 Յունուար, 1914ի թիւը կը հանդիսանայ վերջինը... Անոր երեւումը ըստ տնօրէն խմբագրապետին՝ «Հայ ցուլերը կատաղեցին եւ քաղքենիները հռհռացին»:

Բնական է, երիտասարդութեան մեր ոգեւորութեան մէջ, մի քիչ արագ էինք վազում: Շատերը հիմնական մեր գաղափարը, խեղաթիւրում էին, չէին ըմբռնում ու չէին կարողանում ազատագրուիլ հին նախապաշարունակներից: Շատերն ալ, դիրք ու անուն շինած մարդիկ, վախում էին իրենց ապագայի համար»:

Ամէն նորութիւն ու խիզախութիւն ունեցած է իր հակառակորդները, այդպէս պատահած է նաեւ «Մեհեան»ին:

Դանիէլ Վարուժան միացած է այս խումբին բայց շուտով հեռացած Յակոբ Սիւրուսիին հետ հրատարակելու համար «Նաւասարդ»ը:

Հեղինակը այս լուրջ յօդուածին մէջ կը ջատագովէ նորը, գրականութիւնը լճացումէ ազատելու յախուռն փորձը, որ եղած է խումբին նպատակը:

Ի գուր չէ որ «Մեհեան»ը գրած է. «Սրբապիղծեր, զգո՛յ՛ջ ջահեր կան հոս»:

Պէպօ Սիմոնեան կը հաստատէ որ. «Գրական տեսութիւններու մէջ մի՛շտ ալ ընդունուած է, որ միջազգայինին հասնելու ճամբան կ'անցնի ազգայինէն»:

Շեշտը դրուած է ցեղային խորքի մը տարագումին:

Ահա թէ ինչու ոչ թէ անցեալը փառաւորելու համար մեհեանականները իրենց մամուլը կոչած են «Մեհեան» եւ քուրմերու հաւատքով գինուած սպասարկած են գրականութեան վերառնելով մեր ազգային արժէքները առանց ցուցադրելու ազգայնամոլութիւն:

Մեհեանականները կը գրէ Պ. Սիմոնեան. «Կը ձգտէին հայ լեզուի կատարելագործման՝ օգտագործումով զանազան աղբիւրներու, հիմնականին մէջ սակայն կեդրոնանալով դասական հայերէնի բառագանձին եւ հայ գաւառի շունչը հարագատօրէն վերարտադրող բառ ու բանին»:

«Մեհեան» խիզախումներուն, եւրոպականութիւն բերող Կոստան Զարեանի նորարարութեան եւ Յակոբ Օշականի հարթեցնելուն վերլուծողն է Պէպօ Սիմոնեանը եւ գնահատողը Վարուժանի հեթանոսութեան ու Գեղամ Բարսեղեանի ու Ռուբէն Զարգարեանի արձակին, որոնք նոր շունչ մը բերին մեր գրականութեան: Մինչեւ մեր օրերուն հասնող Յակոբ Մնձուրին այլ մեծութիւն մը որպէս գիւղագետ, որ սիրուեցաւ բոլորէն մեզի կու գայ «Ահեկան»էն:

Հայաստանեան գրականութեան, գաւառի գրականութեան ջատագովն է միաժամանակ, ցեղին աւանդական մեծութեան խնկարկուն, որ որպէս նորութիւն կը բանայ հին էջերը մեր արուեստի ըմբռնումներուն ջատագովելով գեղապաշտութիւնը եւ այն նուաճումները որոնք մերը եղան յիշեալ գրագետներու ստեղծագործութիւններով:

Ետ նայելու օրինակ մըն է, որ նոր շունչով կապուինք մեր գրականութեան:

Փորձել չեմ ուզեր ներկայացնել ինքզինքն, բայց կ'ուզեմ հաստատուել որ Պէպօ Սիմոնեան գրագետը ճշգրիտ աշխատող ժամացոյցի մը կանոնաւոր թիք-թաքին պէս ճշմարտը ներկայացուցած է ճշմարտը:

Շաբ.ը էջ 17

ՀԱՅԱԳԻՐ ԳՐԱԿԱՆ ԱՆԴԱՍՏԱՆԸ ԿԸ
ՀԱՐՍՏԱՆԱՅ ԱՆԹՈՒԱՆ ՏԸ ՍԵՆՈՒԹԵՂԻՊԵՐԻԻ
«ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆԸ» ԳԻՐՔԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ


ԱՐԻՍՍԵՒԱԿ

Իսթանպուլ, 2002-ին հրատարակուած «Յուշատետր 37 - Օտարականներ Աշխատասենեակիս Մէջ» գիրքը «Անթիկոն» վերնագրուած գլուխ մը կը պարունակէ, որուն մէջ հեղինակը՝ Ռոպերթ Հատտէճեան՝ հետեւեալը գրած է Վարդուհի ձէլալեանի կողմէ թարգմանուած եւ հրատարակուած ֆրանսացի թատերագիր Ժան Անուլի նշանաւոր «Անթիկոն» վերնագրուած թատերգութեան մասին. «Շատ ուրախացայ տեսնելով որ օտար գրականութեան այսպիսի ընտիր գործ մը հայերէնի թարգմանուած էր... «Անթիկոն»ը ի՞նչ համար այդ օր ունեցաւ մասնաւոր նշանակութիւն մը անով որ ան մեզի հայերէնով կը բերէր ֆրանսացի հեղինակի մը գործը... Վարդուհի ձէլալեան կը հրատարակէր ֆրանսացիի մը գործը, այսինքն ուրիշի մը գործը, այսինքն մեր մշակոյթին կը շահեցնէր ուրիշ մշակոյթէ ընտիր գործ մը»:

Հիմա, մի քանի տասնեակ տարիներ անց, ուրիշ ֆրանսերէն գիրքի մը հայացումի երեւոյթը նմանապէս կը հրճուեցնէ զիս, այն է Անթուան Տը Սէնթ-Էքզիւպերիի «Փոքրիկ Իշխանը» 1943-ին լոյս տեսած գիրքին արեւմտահայերէն թարգմանութիւնը, որ բնագիրէն կատարուեցաւ Թերէզ Ոսկերիչեանի կողմէն եւ լոյս տեսաւ 2006-ին Ոսկեատու Հրատարակչատունէն: Ներհուն թարգմանչուհի ըլլալէն բացի, ան նաեւ շնորհալի բանաստեղծուհի, յօդուածագիր, եւ հայերէն լեզուի ու հայոց պատմութեան ուսուցչուհի մըն է: Ունի քերթողութեան եւ պատմուածքներու հատորներ, ինչպէս նաեւ երկու վէպեր, որոնք ցարդ լոյս չեն տեսած: 1988-ին, նոյն հրատարակչատունը լոյս ընծայած է իր «Արմատներ» պատմուածքներու հատորը:

Այս իրագործումը յատկանշական է երկու առումով: Առաջին այն է, թէ այս գիրքը ամենէն շատ թարգմանուած գիրքն է, Աստուածաշունչէն ետքը, այս հայերէն տարբերակը 161րդ ըլլալով: Եւ ցարդ անկէ յիսուն միլիոն օրինակ ծախուած է: Եթէ նկատի առնուին լոկ այս տուեալները, սոյն աշխատանքը արդարացնելու այս պատճառ փնտռելու չէ վստահաբար: Սակայն, այս բոլորէն անկախ, երկրորդ եւ նոյնքան, եթէ ոչ աւելի, կարեւոր կէտ մը կայ, որով լիովին կ'արդարանայ այս թարգմանութիւնը. գիրքին բովանդակութիւնը, պատգամը:

Շատ անգամ կը լսենք ու կը կրկնենք թէ մեր երախաները մեր ապագան են եւ պէտք է ամէն ճիգ ու ջանք թափենք որպէսզի երբ անոնք մեծնան, առաւելագոյն չափով պիտի կարենան դրսեւորել իրենց շնորհները: Քիչ անգամ, սակայն, ճիշդ մօտեցում կը ցուցաբերենք այս խօսքը իրականութեան վերածելու: Ինչո՞ւ: Որովհետեւ թոյլ չենք տար որ երախաները ընթանան իրենց բնական ուղիով: Կը կարծենք թէ իրենց աշխարհը բնականաբար թերի է, քանի որ իրենք անչափահաս են, եւ աստիճանաբար կը շեղենք զիրենք իրենց այս աշխարհէն՝ մոռցնել



տալով զայն վերջին հաշուով: Հանգուցեալ մեծ բանաստեղծ Պարոյր Սեւակ լաւապէս ըմբռնած է այս ճշմարտութիւնը, գորս հետեւեալ տողերով արտայայտեց. Աշխարհի... մանկան մաքուր-թիւն է պէտք եւ հէնց այ՛ն մանկան Որիմ ամէն օր աշխարհն են բերում՝

Նաեւ աշխարհի... անմաքուր-ները:

Միևնե իսկ նրա՛նմ՝ անմաքուր-ները,

Քանզի... աշխարհին մաքուր-թիւնն է պէտք:

1945-ին թողարկուած «Ժամացոյցը» շարժանկարին մէջ, Ուրիշը Ուոքըրը ձուտի կարլընտին կ'ըսէ. - Երախաներ հոյակապ ուսումնասիրութեան նիւթ կը հանդիսանան. իրենք իրենց ուրոյն աշխարհը ունին: Որքան ճիշդ: Իսկ փոքրիկ Իշխանին աշխարհը անտարակոյս ամենէն ուրոյն աշխարհներէն մին է համաշխարհային գրականութեան մէջ: Մեր «Ամենայն Հայոց Բանաստեղծ» Յովհաննէս Թումանեանի շատ մը ստեղծագործութիւններուն նման, այս պատմութիւնը եւս յստակօրէն գրուած էր երախաներուն համար, սակայն չափահասներն են, որոնք կեանքի եւ սիրոյ մասին անոր խորունկ փիլիսոփայական պատգամներէն առաւելաբար կ'օգտուին: Այս պատմութեան մէջ, հեղինակը ինքզինք կը պատկերացնէ անօգնական վիճակով Սահարա Անապատին մէջ, քաղաքակրթուած աշխարհէն հազարաւոր մղոններ հեռու: Հոն կը հանդիպի մարդու կերպարանքով իշխանի մը, որ կապոյտ երկնաքարէն եկած է: Անտոյ խօսակցութեան ընթացքին, հեղինակը իր կարծիքները կը յայտնէ մարդկային էակներուն անիմաստ մտածումներու եւ գործերու մասին, շեշտելով թէ մարդիկ, տարիք առնելով, յաճախ կը մոռնան կեանքի կարեւոր բաները:

Այս իրողութիւնը աւելի ցայտուն դարձնելու համար, տանք քանի մը օրինակներ:

Մոլորակի մը վրայ մարդ մը կ'ապրէր, որ երբեք ծաղիկի մը բոցը չէր առած, երբեք աստղի մը չէր նայած. գուժարումէ դուրս՝ ուրիշ բան չէր ըրած: Ինքզինքը կը կարծէր «լուրջ մարդ» սակայն ասիկա մարդ չէ, սուսկ է, ըստ փոքրիկ Իշխանին: (Բնութեան գեղեցկութիւնները գնահատելու կարեւորութիւնը լաւապէս ըմբռնե-

Շաբ.ը էջ 17

# ՃԱՄՐՈՂԱԿԱՆ

## ՆԻԳ ԱՊԱՐԱՆ

### ՊՕՂՈՍԱԳԻՍԵԱՆ

Աշտարակին, նրա պարտեզներին, նրա իմաստունների ցանած լոյսին մնաք բարով եմ ասում: Ինքնաշարժը ոլորաններով բարձրանում է դէպի փէշերը Արագածի-Ալագեագի: Լեռան այդ գահն է եղել հայոց Ար-Արա աստուծոյ (Արա+գահ): Նրա չորս գագաթները իր կրակ է ժայթքել, մարել է այն, որ գահը լինէր իրենց Արայի: Անմիջապէս նրա գագաթների ստորոտին ձիւնոտ լճակ է ծփում, որի ափերին ամրանը հայերը խաչի խնճոցներ են սարքում:

Բարձունքից մի պահ դիտում եմ Աշտարակի կանաչ պատկերը: «Ծիրանաւորն» է իր դարերի կարմիր ժպիտով կանաչն է վառում: Քասաղի ձիւնոտ ջրերն են փորել ընդերքը, կիրճ են արարել, որ գնան գրկեն Մեծամորի ջրերը, որ Արարատի ստորոտի դաշտերին կանաչ փուն: Հեռուում Երեւանն է ծփում, սիրտը մեր փոքրացած երկրի՝ հայոց քսանչորս մայրաքաղաքներից ամենաշքեղապարզը, որը առաւօտեան արեգակի լոյսով է շիկնել:

Վերելքը հանդարտում է, Քասաղի սարաւանդն է այն, խճուղին պարտեզների սիրտն է պատուել: Օհանաւան գիւղն է, Մակուից եկած հայերն են այն հիմնադրել: Երեւի գիւղատեղի Յովհաննու վանքի անունից են իրենց նոր շէնք անուանել Օհանաւան: Մակուն բերդաքաղաք էր եղել Մեծ Հայքի Վասպուրական նահանգում: Ըստ աւանդութեան, այնտեղ նահատակուած է եղել Հայաստանում Քրիստոնէութեան քարոզիչ՝ Թադէոս Առաքեալը, որի յիշատակման համար Մակուի մօտ կառուցել էին Սուրբ Թադէոսի-Թադէի վանքը, որտեղ իրանահայերը ամէն տարի ուխտագնացութեան են գնում: Այնտեղ էին հանգրուանում Արեւմտեան Հայաստանից ժամանած ֆեոտայիներ, գինուած խմբեր, որ գալիք կուրաներին նապապարտատուէին: Այնտեղից էին վարդանի ու խիզաբի հայրերի Նիկոյի Դուռնի հինգ հարիւր դիւցազունները կազմակերպել իրանաստրի արշաւանքը: Արեւազալին, հրազէնների միաժամանակեայ վրէժի կրակով, մարել էին քրտկան Մագրիկ ցեղի լոյսը, մարել քիւրտի յոխորտանքը: Դուք արեւ աստուծոյ արիացիներ, այդ որտեղից այդքան գուլթ էր յորդել ձեր հոգիներում, եւ Մագրիկիցիների կանանց ու փոքրերի համար ճանապարհ էինք բացել որ չբուեն, ցեղի առաջնորդը կանացի շորերով նրանց հետ էր եղել:

Ճանապարհի եզրերին դարձեալ դոյլերով միրգ էր: Ժամանակին այստեղ էինք գալիս Օհանաւանի ու Հասունացող ծիրան գնելու: Բարձրադիր այս տարածքի ծիրանը Արագածի ձիւնոտ հովիտների համն ունէր: Ատում են, հայոց հին աստուածներն են այն աստղերի կրակից պոկել ու բերել հայոց աշխարհ, այնտեղ են հոսել կալիում, արծաթ, մագնեզիում, երկաթ, ֆոսֆոր, վիտամիններ, սպիտակուցներ, ածխածնի: Զարմանահրաշ, երեւի ոչ մի պտուղ նմանը չէ:

Ճանապարհի աջ կողմին կարբին է: Քասաղ գետի սարաւանդը, այդ ու հայոց բազում շէնք է իր ափի վրայ պահում: Հայ շինականները նրա լանջերի դարաւանդներին պարտեզներ են հիւսել: Հայոց ամէն շէնք իր հէքիաթն ունի, ամէն շէնք իր մաքառումների առասպելն

ունի, ափսոս որ ամէն շէնքով սել-ճուք է անցել, կուռել էին, յաղթել էին, պարտուել էին, սակայն գոյատեւել էին: Օսմանցի Օղուզ թուրքը, Անդրկովկասին տիրելու պատերազմում յաղթել էր Երեւանի խանին, որը նահանջելով անպաշտպան էր թողել մերձակայք բնակավայրերը: Պաշարել էին կարբին: Նրա բնակիչները գիւղի մատոցներն ու իրենց տները ամրոցի էին վերածել: Պաշարուած կարբեցին վճռական դիմադրութիւն էր ցոյց տուել, թուրքը առաջարկել էր բանակցել նրա առաջնորդներ՝ Աղաբաւի, Սարգիսի, Պողոս ու Աւագի հետ, որոնք համաձայնել էին գինաթափուել, պայմանաւ որ թշնամին դադարեցնէր պաշարումը ու հեռանար նրա մատոցներից: Եթէ պատրաստ չես ինքնապաշտպանութեան, եթէ հայրենի հողի մաքառման տենչով, բու գաւակների արեամբ այն շիկացնելու կորով չունես՝ դատապարտուած ես կործանման: Ահա այդպէս կործանուեց արեւմտեան կողմն հայոց աշխարհի: Եւ հիմա ընկած աշխարհի դուներ՝ ասում ենք ցեղ են սպանել, ամօթ չէ՞...: Ձեռքերս դէպի կարբեցիների շէնք պարզած, ողջոյն եմ ասում նրանց կուռին:

Ճանապարհի ձախ կողմին Փարպին է: Այս շէնքում է, որ 447 թուականին, հայոց երկիր այցի է եկել Ղազար անուևով մի մանչ, որը դարերով քայլում է հայերի հետ՝ որպէս Ղազար Փարպեցի պատմիչ: Հայաստանի մարզպան՝ Վահան Մամիկոնեանը պատուիրել էր նրան գրել «Պատմութիւն Հայոց»ը: Փարպեցին իր «Պատմութիւն»ը գրել էր Բիւզանդիայի ու Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանման 387 թուականից յետոյ պատահած դէպքերի պատմութիւնով: Փարպեցին դիւցազներգօրէն նկրագրել է Վարդանանց պատերազմը եւ Վահան Մամիկոնեանի պարսիկների հետ կնքած Նուարսակի դաշնագրի մասին:

Ինքնաշարժը սարաւանդի հանդերձում բացուած խճուղիով գնում է վերել, գնում է Արագածի փէշերին հպելու, հովանալու նրա պաղ հովիտների շունչով: Ես էլ եմ թռչում... դէպի իմ ծննդավայր, որսորդ հայրս է լերան լանջի թաքստոցում կանգնած թռչունների ձախրանքն էր սպանում, դաժան է մարդ արարածը, սպանում է երազ, սպանում է ցեղ:

Խճուղիի աջ կողմին Արտաշաւանն է, ճանապարհի ամէն շէնք կարծես պարտէզ լինի: Այս նախալեռնային գօտում ծիրանենին, խնձերոնին, ընկոյզենին, տանձենին որտեղից են այդքան համ ու բուրմունք ամբարում իրենց թեւերից ընկած պտուղներին: Հայերը, ռուսի հեռու տափաստանների պաշտպանութեան մարտերում, հարիւր հազարներով գոհուեցին, հայկեան դիւզազնութեամբ հարիւրներ հերոսացան, որոնց յաւերժացման համար շէնք, փոռոցներ անուանակոչեցին: Այդ կուրաներում քաջացած Արտաշը՝ Արտաշաւան դարձած, նրա ոգու ջահն է բազմել այս սարաւանդի աւանում:

«Ռուսի ոտքը» հայոց աշխարհ եկաւ տիրելու համար, ասել էին Հայաստանն առանց հայերի: Հայեր գինուորագրուել էին նրա բազում մարտերին, հարիւրաւոր զորապետեր բանակներ էին տարել կուռի: Նրանց հողին հայկեան արիւն լեղուեց, ինչքան երազներ մարեցին: Իսկ հիմա, ազգայնական



մոլոցքով հիւանդ ռուս տականքներ, իրենց երկրում սպանում են հայերի՝ հայլինելու համար: Այդ ինչ արիւն է հոսում նրանց սրտերում, թուրքի նման սպանում են միայն հայ լինելու համար: Թաթարները երկու-երեք դարեր տիրել էին նրանց հողին, ինչ իմանաս, նրանք արդեօք իրենց ծիններից բաժին չէին թողել այնտեղ: Ափսոս հայերի յեղած արեան, ափսոս նրանց երկրում հայերի վառ իմաստութեան լոյսին, հրաշակերտումների արարմանը:

Հայեր եւ օտար զբօսաշրջիկներ լեցուն էին: Ես էլ էի ինքնաշարժի դուրս եկել: Հարթակում կանգնել էին բարձրահասակ երեսուն վեց քանդակներ: Հայերէն տառերի ջահերն էին նրանք, հայոց լեռների ընդերքի կրակից ժայթքած կարմիր քարեր, որոնց երեսներին ծաղկել էին Արագածի լանջերի ալուան ծաղիկներ, պատուած դէմքերով նուներ, կարմիր խաղողի ողկոյզներ, ծառերին մագլոցող բաղեղներ: Մօտեցայ իւրաքանչիւրին, շոյցի նրանց իմաստութիւնը, շոյցի իմ սրտում կաթած նրանց լոյսը, փաթաթութեցի նրանց, սարսուց հոգիս: Սաւառներ իմ հայրենի գիւղի դպրոց, թովմաս վարժապետի հետ Ա, Բ, Գ բարբառելու: Մաշտոց դարձած Մեսրոպի հոգու խոյանքի լոյսով ծնուեցին հայոց երեսուն վեց տառերը, որոնց որպէս ազգի լինելիութեան ջահեր բունած տարաւ իր աշխարհի շէնքերի մանչերի սրտերին լոյս կաթելու: Նրանցից իւրաքանչիւրը հայու մտքի իմաստութեան մէկ հնչիւն է, որը իր մտքի տարողութեան հօրութեամբ ընդունակ է արտայայտելու նոյնքան հնչիւններ, բազում ուրիշ ազգերի իմաստութիւնը ընդունակ էր արտաբերելու միայն քսան, քսան չորս հնչիւնների տառեր:

Աւետում են որ հեթանոս հայերը արիական-հնդեւրոպական իրենց նախնիների ամենահին տա-

ռերով էին գրութիւն յօրինել: Դպրութեան Տիր աստուածն էր տիեզերքի աստղերից այն բերել իրենց մեհեաններ, որոնց մեհեանագրեր՝ աստուածների մեհեանների գրեր էին կոչել: Այրել էին նրանց հեթանոս աստուածների տաճարներում, ափսոս: Սակայն նրաց լոյսը ճառագել էր Տարօնի Հացեկաց գիւղի իմաստուն Մեսրոպ վարդապետի մտքի տեսիլքին, որը այն դրօշմել էր մազադաթի վրայ, այն որպէս լոյս տարել ցանելու իր ցեղի մանչերի սրտերին: Եւ այդ գրերով Գողթան երգիչները Վահագնի արեւագալ ծնունդը աւետեցին, Նաւասարդը երգեցին, առաւօտեան լոյսի արեգակը փառաբանեցին: Եւ այդ գրերը որպէս սպառնալից գինուորներ, իրենց ցեղի առաջ լոյս փռած՝ տանում են նրան դէպի յաւերժութիւն:

Եւ այդ լուստտ յուշարձանների արարումը մտայղացել էր իրականացնելու Ապարանցի գաւակ՝ Աղուան Յովսէփեանը, այժմու Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր դատախազը: Այդ նար էր եղել նաեւ, որ հարիւր հազարաւոր հայերին ծիրանափողերով պարի տարել իրենց Արայի Գահի՝ Արագածի, շուրջ բոլորը, որոնց հայոց հողին հպման տրոփիւնը որպէս երկրի ցնցում գրանցել էին աշխարհի ազդանշանային սարքերը:

Յուցանակ է խճուղիի աջին՝ հայերէն Քուչակ, նաեւ ռուսերէն: Առաջ պարտադիր էր, իսկ հիմա ինչու ամէն տեղ նաեւ ռուսերէն, կարող է դեռ չեն բուժուել ռուսամոլութիւնից: Քուչակ՝ բանաստեղծութեան արքայից արքայ Չարենցն է այն կոչել «Նարեկացու Քուչակի պէս լուսապսակ ճակատ չկայ»: Ժողովուրդի կողմից, որպէս սիրուած երգիչ-աշուղ, Նահապետ էին մկրտել Վանցի Քուչակին: Հայ միջնադարեան քնարերգութեան տաղանդաւոր ներկայա-

Շարք էջ 17

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...**

**Մեծ Ժողովրդականութիւն Վայելող Կլէնտէլի AMGA 280-րդ Ալիքը Այժմ Կը Սփռուի GlobeCast**

**Արբանեակային Հեռատեսիլով Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի Ամբողջ Տարածքին**

**Դուք Կրնաք Դիտել Հայաստանեան Լուրեր - Քաղաքական Վերլուծութիւններ երաժշտական Հաղորդումներ - Եւայլն**

**Մանրամասնութիւններու Համար Հեռաձայնել 818.547.9696**

### ԴՊՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՏԻՐ ԱՍՏՈՑՈՅ ՏՕՆԸ

Շաբաթականում էջ 13-էն

Լասարից ճիշտ 101 օր չեստոյ ներկայ հիւլեան տոմարի Յունիս ամսուայ 29ին: (մեր տոմարում ամսուայ ամէն մի օրը ունէր իր յատուկ անունը, եւ ամսուայ 11րդ օրը կոչուում էր Երազամոյն):

Կարեւոր է նշելու, որ այս մեր տօնը եւս Աքամենեան դինաստիայի Արտաքսերքսես Բ. թագաւորը (մ.թ.ա. 405-423) երբ մ.թ.ա 395 թ. իր մայրաքաղաքը Բաբելոնից տեղափոխեց Համադան ու Շուշ եւ Հայոց Միհր, Անահիտ եւ Տիր աստուածները պաշտամունքը ներմուծեց Պարսկաստան, այս տօնն էլ Տիր աստծոյ հետ ներթափանցուեց եւ սկսուեց կիրառուել պարսկականութիւնը եւ գրադաշտականների մօտ, որոնք այդ աստծու անուամբ 4-րդ թիւր (Տիր) ամսուայ 15-րդ օրն, 2

(Դեյ բե Մեհր օրը) տարուայ 105րդ օրն է, սկսեցին տօնել:

Յետագայում մ.թ. 9-րդ դարի պահլաւերէն գրուած Բոն դահեշ-նում այս տօնը կապակցեցին արարչութեան գործընթացին եւ ըստ այդ կրօնական գրքի Չրդ գլխի 23րդ հատուածի այդ օրը արարիչ Ահուրա Մազդան Չուրը արարեց: Եւ այսպէս, Հայոց հին տոմարի չորրորդ ամիսը Տիր աստծու անունով կոչուել է Տրէ կամ Տրի, ծիածանը՝ Տիրական կամ Տրական գօտի:

Հայաստանում Տիրի անունով ստեղծուել են մի քանի տեղանուններ եւ անձնանուններ: Ահաւասիկ՝ Տիրինկատար (լեռ), Տիրակատար (քաղաք), Տիրաուիճ (գիւղ), Տրի (գիւղ), անձնանուններ՝ Տիրան, Տիրատուր, Տիրայր, Տիրիբազ, Տիրոց, Տրդատ, եւայլն:

### ԷՋԵՐ ԵՒ ՆԻԻԹԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Շաբաթականում էջ 15-էն

տանձանի մը պէս, տեղ տեղ քիչ մը շուայլանքով բաց տեղին:

Այսինքն վերջնեկը ես եմ, եւ քանի որ սոյն հրատարակութիւնը կը կրէ Ա. հատոր նշումը, ուրեմն վերջինը չեմ: Ինծի հետեւողներ պիտի ըլլան:

Պէպօ Սիմոնեանի հայ մամուլի էջերէն տրուածները անպայման

պէտք է սպուլին հատորով որպէսզի մենք ունենայինք սփիւռքի մօտաւոր գրական համայնապատկերը:

Միայն էր նման հատոր մը չունեալը գոր հրատարակութեան տուած է կիւլպէնիկեան հաստատութիւնը, շնորհակալութեան արժանի այս գործը լոյսին բերելով:

Կը սպասենք Բ. հատորի հրատարակումին:

### ԱՆԹՈՒԱՆ ՏԸ ՍԵՆԹ-ԷՔԶԻԴՊԵՐԻԻ «ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆԸ»

Շաբաթականում էջ 15-էն

լու համար, կ'արժէ կարդալ Ռ. Հատտէճեանի «Յուշատետեր 44 – Բնանկարներ» հատորը, որ լոյս տեսաւ Իսթանպուլ, 2004-ին):

Ուրիշ մոլորակի վրայ կայ «գործարար» մը, որ աստղեր հաշուելով կը գբադի, կարծելով որ աստղեր իրեն կը պատկանին, գաղափար չունի գործի մը օգտակար ըլլալու, պիտանի ըլլալու մասին:

Անշուշտ, այս պատմութեան բոլոր տիպարները ժխտական չեն: Օրինակի համար, հինգերորդ - եւ ամենէն պզտիկ - մոլորակի վրայ կայ լապտեր եւ լապտերավառ մը: Երբ կը վառէ, նոր աստղի մը կամ ծաղիկի մը կեանք կու տայ: Գեղեցիկ գբադում է եւ իսկապէս օգտակար գործ է, որովհետեւ գեղեցիկ է:

«Փոքրիկ Իշխանը» այնքան շատ դասեր կը պարունակէ, որ կարելի չէ ամէնը յիշել, սակայն պէտք է հիմնականները տալ հոս:

Մարդ պէտք է մոռնայ իր մանկութիւնը, անմեղութեան այն շրջանը, երբ անհամար հարցումներ կը ծագին, հիացումի անհաշիւ պահեր կ'ըլլան:

Երախաներուն նուազապաշտութիւնը (minimalism) մեծերու կողմէն չի հասկցուիր:

Մեծերը, որոնք երեւակայութեան թուիչքներ կատարելու ունակութիւնը կորսնցուցած են, երախաներուն կը թելադրեն իրական կամ գործնական գիտութիւններու ծիրէն ներս պարփակուիլ: Ըստ մեծերուն, այս վերիններով գբադիլը փաստ է «առողջ բանականու-

թեան տէր մարդու»:

Այն ինչ որ տեսանելի չէ չափահասներուն, տեսանելի է փոքրիկներուն, որուն մարմնացումը փոքրիկ իշխանը կը հանդիսանայ:

Չափահաս ու իսկացի կարծուած մարդիկ շատ անգամ վճիռ կու տան՝ աւելի արտաքին երեւոյթէն կրած իրենց տպաւորութեան հիման վրայ, փոխանակ բուն երեւոյթը առարկայական աչքով նայելու:

Չափահաս մարդիկը ճանաչողութեան պակասէ կը տառապին:

Կարգապահութիւնը կեանքի օրէնք է. մարդ պէտք է կարեւորը անկարեւորէն զանազանել գիտնայ:

Երբ մէկը ոգեւորուած է ստիպողութեան եւ անհրաժեշտութեան զգացումներով, այն ատեն ձեռնարկած գործը յաջողութեամբ կը պսակուի:

Մարդիկ կան, որոնք նոյն պարտէզի մէջ 5,000 վարդ կը մշակեն եւ չեն գտներ փնտրածներն... մինչդեռ փնտրածներն կրնան գտնել մէկ վարդի եւ կամ քիչ մը ջրի մէջ... բայց աչքերը կոյր են: Հարկ է սրտով փնտրել:

Բացի իր խորիմաստ բովանդակութենէն, գրախօսուող այս հատորը ուրիշ առաւելութիւն մըն ալ ունի: Գիրքը, որ ընտիր թուղթի վրայ տպուած է, օժտուած է յիսուն գունաւոր գծագրութիւններով, որոնք հեղինակին իսկ գործերն են:

Այս եզակի գիրքէն օրինակ(ներ) ստանալու համար, դիմեցէք հայկական գրախանութիւններուն եւ կամ Յովհաննէս Ոսկերիչեանին. 610-325-9356 կամ vosky@verizon.net:

### ՆԻԳ ԱՊԱՐԱՆ

Շաբաթականում էջ 16-էն

ցուցիչն է եղել, հեղինակը աշուղական բազմաթիւ երգերի, առաջինը հայ աշուղներից: Ընդարձակ է Քուչակ աւանը, ձմրանը ցրտաշունչ է, այնտեղ ազիներ չկան, ծառերը կը մրսեն ու չեն մայրանայ ծաղիկով: Քուչակի մոտաքի աջ խճուղուց բազում անգամներ գնացել եմ Քասաղ գետի վերին հոսանքի ջրերը բարձր ամբարտակով պատնէշած Ապարանի Զրամբար: Արագածի ու Ծաղկունեայ լանջերին եկած ծաղկոտ հովիկների շունչը ըմբոշինելու համար հանգստեան տներ, մանուկների ճամբարներ էին հիմնել: Ամբարն բազմամարդ էին լինում ջրամբարի ափերը: Այն ծովում էր տասը քմ. երկարութեամբ ոլորապտոյտ ձորակներով, այնտեղ էին հաւաքում Արագածի ձիւնոտ ջրերը: Հայոց հողի հետ յափշտակել են նաեւ վան ու Ուրմիա ծովերը, գերավարել հրաշագեղ առասպելական Փարաւան, մեզ հետ է մնացել երկնքից հայոց լեռների գիրկը իջած կապտակ Գեղամայ ծովը: Հայերը, պատնէշելով իրենց լեռները իջած ջրերը, ծովակներ են արարել: Այնտեղ հանգած ջրերը ջրանցքներով հոսում են հայոց արտեր, ու այգիներ:

Ամբարն, Ապարանի ջրամբարի ջրերը հոսում են Արգնի-Շամիրամ ջրանցքով: Ինչու են մեր Արա Գեղեցիկ թագաւորին սպանող վաւաշոտ ասորեստանցու անունով կոչել շէներ, աւաններ, ջրանցքներ: Եւ նոր ժամանակների մի նախարարի քնաքարով ինչպէս էին հայոց տիկնայք կամեցել «Շամիրամ» անունով քաղաքական կուսակցութիւն հիմնել, որը երեւի «Նուարդ»ի անէծքով արագ փլուեց: Մի քանի հազարամեակներ առաջ, հայոց Արամէ Արարատեան թագաւորութեան արքաները ջրանցքներ էին փորել, որպէսզի իրենց Տուշպա քաղաքի այգեստանները ոռոգէին, մինչեւ այժմ ջուր է հոսում վանի այգիներին, Հրազդանի կիրճից դէպի երեւանեան «Տալմաչի Պաղեր» ու էջմիածին: Ինչու էին հայերը Տուշպայի այդ ջրանցքը նաեւ կոչել Շամիրամի ջրանցք: Որպէսզի հայերին բնիկ չհամարէին, այլազգի գիտնականները նենգափոխել են արիական հայ ցեղի անցեալը: Արմէն Արամէ արքայի հիմնադրած Աստուաշեան Արարատեան թագաւորութեան այդ հարստութեան թագաւորների քարէ սեպա-

գիր արձանագրութիւնները վերածել են ասորական լեզուի «բանալի»ով: Զգիտես ինչպէս, երեւի մտացածին, նրանց երկիրը ընթերցել են Ուրարտու: Արդեօք հայ գիտնականներ չպիտի կարողանան կարգալ այդ արձանագրութիւնները ուրիշ «բանալի»ով եւս եւ հաւատացէք, այն հայերէն պիտի հնչի, ինչպէս Շուշերական արձանագրութիւնները հայերէն է ընթերցում հայ իմաստուն մի այր: Աքեմենեան Դարեհ Բ. վշտասպեան արքայի Բիհիստունեան էլամերէն, Ասորերէն ու Արամերէն լեզուներով ժայռեղէն արձանագրութեան մէջ նոյն այդ տարածքի երկիրը վերոյիշեալ երկու լեզուներով արձանագրուած է Արմինիա, իսկ ասորերէն լեզուի մասով՝ Ուրուաշտու: Այն երկրի անուանում է եղել, թէ պարզապէս նրանց կողմից այդ տարածքը բնութագրող յատկանիշ, ինչպէս Նայիրի՝ գետերի, կրակի երկիր: Մնապարծութիւն չէ, որ մեր պատմութեան «պողոտայ» ներով քայլենք, ծանինք մենք մեզ, որ արմենական հայկեան ոգի պայթի մեր սրտերում, մնացել ենք անու, թող չիարմրի նրա արեւը մեր հոգիներում:

Ապարանի շրջան, այնտեղ բացուած ճանապարհով գնում եմ բարեւելու նրա եզրերին յառնած շէները: Արագածի ու Ծաղկունեայ լեռները բացուել էին ու իրենց փէշերին ընդարձակ դաշտավայր արարել: Գեղամայ ծովից էլ է բարձր այն, ամառը անուշ հովիտներ են գալիս լեռներից, իսկ ձմրանը ցուրտ է, ձիւնոտ է այնտեղ, շատ ցուրտ է: Այնտեղ արտերում Արագածի ցուրտ հովիկները ցորեանի հասկերին օրօր են անում: Երբեւիցէ դիտել էք կանաչ դաշտերի հասկերի վարսերի դողը, շնչել էք բուրմունքը ցորեանի ծաղիկի, հպել էք արեւից շիկնած նրա քիստերին եւ արդեօք նրանց սարսուռը չի հոսել ձեր սրտերում: Այդ հասկերում արեւը հանապազօրեայ հաց է արարում: Ես, մանչ եղած ժամանակ քայլել եմ իմ ծննդավայրի արտերում, ձեռներս եւ դէմքս են շոյել հասկերը, նրանց քիստերի սարսուռն է տենչում հոգիս: Կանաչ հասկերից փունջ եմ կապել, դեռ չհասունացած ցորենի հասկերը վառել կրակի վրայ, տրորել ափիս մէջ եւ կանաչ հաց ճաշակել: Դաշտերում, այգիներում, պարտէզներում՝ արեւի, լոյսի արարման տիեզերական խորհուրդն է հրաբխում:

**ՔԱՉ ՆԱԶԱՐ**  
**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
**Ամէն Կիրակի երեկոյեան**  
**Ժամը 10:00-ից 12:30**  
**Կլէմտէյի 280-րդ կայանից**

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**  
**ՀԵՌՈՒՍՏՍԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ**  
**ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԸ**  
**CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ**  
**(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆՆՈՒ)**  
**GLOBACAST SATELLITE**  
**ՀԻՆԳՇԱՔԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00**

**www.massisweekly.com**  
**massis2@earthlink.net**

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ «ՓԻԼՆԻԿ»Ը ՅԱՂԹԵՑ «ԱՐԱՐԱՏ»ԻՆ

Ֆուտբոլի Հայաստանի առաջնությունում կայացրան 14-րդ տուրի հանդիպումները: Տուրի կենտրոնական հանդիպումը տեղի ունեցավ «Փիլնիկ» մարզադաշտում, որտեղ ախոյեան «Փիլնիկ»ը 1:0 հաշվով առաւելութեան հասավ առաջատար «Արարատ»ի նկատմամբ: Ընթացիկ մրցաշրջանում սա «Փիլնիկ»ի առաջին յաղթանակն էր արարատցիների նկատմամբ:



«Փիլնիկ» – «Արարատ»

Եւս մեկ կենտրոնական հանդիպում կայացավ «Միկա» մարզադաշտում, որտեղ մրցեցին «Միկա»ն եւ «Բանանց»ը: Հիւրերը այս խաղում առաւելութեան հասան 3:1 հաշվով: Բոլոր 4 գնդակներն էլ խփեցին լեգենտներ ֆուտբոլիստները:

Կապանում «Գանձասար»ը խոշոր 4:1 հաշվով պարտութեան մատնեց «Ուլիս»ին:

Անակնկալ գրանուեց «Կիլիկիա» - «Շիրակ» խաղում, որում տանտէրերը առաւելութեան հասան 2:1 հաշվով:

Հայաստանի առաջնութեան 2-րդ շրջանը գրեթէ ավարտուած է: Պէտք է կայանան միայն յետաձգուած 2 հանդիպումներ, որոնցում «Միկա»ն պէտք է մրցի «Բանանց»ի եւ «Փիլնիկ»ի հետ: 20 օրեայ ընդմիջումից յետոյ կը սկսի առաջնութեան 2-րդ կէսը, որում կը կայանան 3-րդ եւ 4-րդ շրջանները:

- «Փյունիկ» - «Արարատ» 1-0
- «Միկա» - «Բանանց» 1-3
- «Գանձասար» - «Ուլիս» 4-1
- «Կիլիկիա» - «Շիրակ» 2-1

14-րդ տուրից յետոյ մրցաշարային աղիւսակը ունի այսպիսի տեսք.

	Խաղ	Ցաղ.	Հաւ.	Պարտ.	Կօլ	Կէտ
«Արարատ» Երեւան	14	9	2	3	22-11	29
«Միկա» Աշտարակ	12	7	3	2	19-10	24
«Բանանց» Երեւան	13	7	3	3	18-9	24
«Փիլնիկ» Երեւան	13	7	3	3	13-6	24
«Գանձասար» Կապան	14	6	3	5	20-16	21
«Ուլիս» Երեւան	14	4	1	9	10-16	13
«Շիրակ» Գիւմրի	14	3	2	9	8-19	11
«Կիլիկիա» Երեւան	14	2	1	11	9-25	7

ԱՐԿԱՂԻ ԱՆԴՐԵԱՍԵԱՆԸ ՀԵՌԱՑԱԲ «ՄԻԿԱ»ՅԻՑ

Հայաստանի 2007թ. պրոնգէ մետալակիր «Միկա»յի գլխաւոր մարզիչ Արկաղի Անդրէասեանը հեռացել է գբաղեցրած պաշտօնից: Հայաստանի ընթացիկ առաջնութիւնում նրա գլխաւորութեամբ «Միկա»ն ընթանում էր 2-րդ հորիզոնականում:



«Միկա» ակումբի գլխաւոր քարտուղար Արմէն Պետրիկեանը «Ա1+»-ի յայտնեց, որ Անդրէասեանը հեռացել է առողջական խնդիրների պատճառով. «Անդրէասեանի փոխարէն «Միկա»յի գլխաւոր մարզիչ պարտականութիւնները ժամանակաւորապէս կատարում է Իշտուան Սեկեչը, որին կ'օգնեն Լեւան Նոգիւան եւ Ալիոշա Աբրահամեանը»: Իշտուան Սեկեչը, որը նախկինում յայտնի ֆուտբոլիստ է եղել, մարզչական մեծ փորձ ունի: ԽՍՀՄ-ի օրօք նա մարզել է մի շարք բարձրագոյն խմբի ակումբներ, որոնց թւում Լվովի «Կարպատներ»ը: ԽՍՀՄ փլուզումից յետոյ աշխատել է մի շարք ռուսական թիմերում:

ՇԱԽՄԱՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԿԱՆԱՆՑ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉԵԱՆԸ ԿԸ ՄՐՑԻ ԱԲՍՏՐԻԱՑԻ ԵՒԱ ՄՈՁԵՐԻ ՀԵՏ

ՖԻԴԵ-ն անցկացրել է Օգոստոսի 28-ից Սեպտեմբերի 18-ը Նալչիկում կայանալիք շախմատի աշխարհի կանանց առաջնութեան մասնակիցների 1-ին փուլի վիճակահանութիւնը: Առաջնութիւնն անցկացուելու է նոկաուտ համակարգով: Շախմատիստուհիները իւրաքանչիւր փուլում զոյգեր կը կազմեն եւ երկու պարտիայից բաղկացած մրցախաղում կ'որոշեն յաջորդ փուլի ուղեգրի տիրոջը: Հարկ եղած դէպքում մրցակիցների միջեւ կ'անցկացուի լրացուցիչ մրցախաղ:

Առաջին փուլում Հայաստանը ներկայացնող Լիլիթ Մկրտչեանը կը մրցի աւստրիացի Եւա Մոգերի հետ: Իսկ ԱՄՆ-ում բնակուող Կատերինէ Ռոհոնեանի մրցակիցը կը լինի Նատալիա Ժուկովան (Ուկրանիա): Առաջնութիւնը կը մեկնարկի Օգոստոսի 29-ին: Երկու ուժեղագոյն շախմատիստուհիները, որոնց կը յաջողուի յաղթահարել նախորդ փուլերը, եզրափակիչ մրցախաղում կը վիճարկեն աշխարհի ախոյեանուհու տիրոջը: Եզրափակիչը բաղկացած կը լինի 4 պարտիայից: Ոչ-ոքի արդիւնքի դէպքում կը նշանակուի լրացուցիչ մրցախաղ: Ախոյեանուհին յայտնի կը դառնայ Սեպտեմբերի 18-ին:

ԾԱՆՐԱՍԱՐՏՈՒՄ ՀԱՒԱՍԱՐԸ ՉՈՒՆԵՆՔ

Կովկասեան երկրների մարզական կեանքին նուիրուած յօդուածաշարում այսօր կ'անրադառնանք անհատական առաւել մասսայական 3 մարզաձեւերին:



ԸՍԲՔԱՍԱՐՑ

Այս մարզաձեւը մեծ մասսայականութիւն է վայելում 3 երկրներում, սակայն վրաստանի հաւաքականի ունեցած յաջողութիւնները ըմբշամարտում շատ աւելի մեծ են քան Հայաստանինը եւ Ատրպէյճանինը: Խորհրդային տարիներին վրաց ըմբշները բաւական յաճախ էին օլիմպիական մետալներ նուաճում եւ միանգամից 10 օլիմպիական ախոյեան ունեն: ԽՍՀՄ փլուզումից յետոյ վրացի ըմբշներին ոսկէ մետալի արժանանալ չի յաջողուել, փոխարէնը նրանք մի քանի պրոնգէ եւ արծաթէ մետալներ են նուաճել: Իսկ ահա Հայաստանը, որը ԽՍՀՄ-ի օրօք ընդամէնը 2 ոսկու էր արժանացել (Լեւոն Զուլֆարկեան՝ յունահռոմէական ոճ-1988թ. օլիմպիական խաղեր, Իսկանդար Մնացականեան՝ յունահռոմէական ոճ - 1992թ. օլիմպիական խաղեր), կարողացել է ախոյեան ունենալ նաեւ անկախութեան օրօք:

Այդ մետալը 1996թ. օլիմպիական խաղերում նուաճել է Արմէն Նազարեանը, որը ներկայումս հանդէս է գալիս Պուլիկարիայի դրօշի ներքոյ: Եւրոպայի եւ աշխարհի առաջնութիւններում վերջին տարիներին առաւել յաջող են հանդէս գալիս Ատրպէյճանի ներկայացուցիչները: Յամենայնդէպ օլիմպիական խաղերի ուղեգրեր ամենաշատը հենց նրանք են նուաճել, իսկ այդ ուղեգրերը խաղարկուած են հիմնականում աշխարհի եւ Եւրոպայի առաջնութիւններում, ինչպէս նաեւ վարկանիշային մի քանի մրցաշարերում: Ազատ ոճում Ատրպէյճանը ուղեգիր է նուաճել բոլոր 7 քաշերում, Հայաստանը միայն 4-ում, իսկ վրաստանը՝ 5-ում: Յունահռոմէական ոճում Հայաստանը եւ Ատրպէյճանը վարկանիշներ ունեն 6 քաշային կարգերում, վրաստանը՝ 5-ում:

Կանանց ըմբշամարտում Հայաստանը եւ վրաստանը ընդհանրապէս չունեն ուղեգիր, իսկ Ատրպէյճանը իրաւունք ունի ներկայացնել 3 մարզուհու: Եւրոպայի 2008թ. առաջնութիւնում Հայաստանը յունահռոմէական ըմբշամարտում նուաճեց 1 ոսկէ, 1 արծաթէ մետալ, Ատրպէյճանը 1 ոսկէ, վրաստանը 1 արծաթէ, 1 պրոնգէ, իսկ ահա ազատ ոճում մեր ըմբշները արդիւնքի չհասան, մինչդեռ վրաստանը ունեցավ 2 ախոյեան եւ 2 փոխ-ախոյեան, Ատրպէյճանը՝ 4 պրոնգ:

ԾԱՆՐԱՍԱՐՑ

Այստեղ Հայաստանի առաւելութիւնը բացայայտ է: Եւրոպայի վերջին 2 տարիների առաջնութիւններում մեր հաւաքականը գրաւել է 1-ին հորիզոնականը:

Հայաստանի 2007-08թթ. ունեցել է Եւրոպայի միանգամից 7 ախոյեան: Հայ ծանրորդները յատկապէս յաջող հանդէս եկան 2008թ. առաջնութիւնում, որտեղ կանանց եւ տղամարդկանց պայքարում ունեցանք 2-ական ոսկէ մետալ, մինչդեռ Ատրպէյճանը եւ վրաստանը ընդհանրապէս մօտ էին մրցանակային տեղ գրաւելուն:

Կանանց ծանրամարտում հարեւան երկրները ընդհանրապէս մասնակից չունէին, իսկ տղամարդկանց պայքարում լաւագոյն արդիւնքը 5-րդ հորիզոնականն էր: 2007թ. աշխարհի առաջնութիւնում եւս ամենաշատը Հայաստանի հաւաքականի ելույթն էր, թէեւ մեր ընտրանին միայն 1 մետալի արժանացաւ: 77կգ քաշային կարգում աշխարհի փոխախոյեան դարձաւ Գէորգ Դաւթեանը: Ատրպէյճանը եւ վրաստանը դարձեալ մասնակցում էին միայն տղամարդկանց պայքարին եւ ոչնչով աչքի չընկան: Ամէն դէպքում ատրպէյճանցիներին յաջողուել է թիմային հաշուարկում լաւ արդիւնք ցոյց տալ եւ օլիմպիական խաղերին ներկայանալ 5 հոգանոց կազմով, սակայն մետալներ այս ծանրորդներից Ատրպէյճանում չեն սպասում:

Տղամարդկանց պայքարում նոյնքան ուղեգիր են նուաճել նաեւ հայ ծանրորդները, որոնք մեր գլխաւոր յոյան են յառաջիկայ խաղերում: Իսկ ահա վրացիները, որոնք օլիմպիական նախորդ խաղերում ախոյեան են ունեցել այս մարզաձեւում, փեքինում կ'ունենան ընդամէնը 1 ծանրորդ: Ինչպէս արդէն նշուեց՝ կանանց ծանրամարտում վրաստանը եւ Ատրպէյճանը Եւրոպայի եւ աշխարհի առաջնութիւններում մասնակիցներ չեն ունեցել, ուստի գրկուած են նաեւ օլիմպիական խաղերին մասնակցելու իրաւունքից: Հայաստանը կանանց պայքարում ունի 1 ներկայացուցիչ:

Երիտասարդների եւ պատանիների, Եւրոպայի եւ աշխարհի առաջնութիւններում դարձեալ Հայաստանի առաւելութիւնը բացայայտ է: Մեր ծանրորդները վերջին տարիներին բաւական յաջող են հանդէս գալիս, մեծ թուով մետալներ նուաճում, իսկ վրաստանի եւ Ատրպէյճանի նուաճած մետալները նոյնիսկ գումարելու դէպքում Հայաստանին ցոյց տուած արդիւնքին չի հաւասարուի:

ԲՈՑՆՔԱՍԱՐՑ

Այստեղ առաւելութիւնը մի փոքր Հայաստանի կողմն է: Դրա վաւ ապացոյցը օլիմպիական խաղերի ուղեգիր նուաճած մարզիկների քանակն է: Հայաստանը 4 բռնքամարտիկ կ'ուղարկի Փեքին, իսկ վրաստանը եւ Ատրպէյճանը՝ 2-ական: Համեմատութեան համար նշենք, որ 2004թ. խաղերին Հայաստանը ունէր 1 մասնակից, վրաստանը՝ 2, Ատրպէյճանը՝ միանգամից 9-ը:

Հայ բռնքամարտիկները յաջող հանդէս եկան 2008թ. աշխարհի առաջնութիւնում, որտեղ էլ նուաճեցին 3 ուղեգիր: Երկարատեւ ընդմիջումից յետոյ մեր մարզիկները սկսել են յաջող հանդէս գալ միջազգային ասպարէզներում: Ամէն դէպքում վարդիմիր Ենգիբարեանի, Դաւիթ Թորոսեանի, Սամսոն Խաչատրեանի, Իսրայէլ Յակոբ Կոխեանի եւ Նշան Մունչեանի պէս բարձրակարգ բռնքամարտիկներ այսօր մենք չունենք:

### ՇՈՊԵՐԱՆՊԻՍ

Հանգուցեալ ՎԱԶԻ ՄԱՐՏԻՐՈՍ ԻՆԳՆԱՏԻՈՍԵԱՆԻ մահուն քառասունքին առիթով՝ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Յուլիս 20, 2008-ին, Ս. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցու մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, CA յաւարտ Ս. Պատարագի ժամը 11:00ին:

Սգակիրներ՝ Այրին՝ Մայլին Իգնատիոսեան եւ գաւակը Տիւրն Եղբայրները՝ Ալեք Իգնատիոսեան եւ գաւակները ձորճ Իգնատիոսեան եւ գաւակները  
Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Եկեղեցու «Գարակէօզեան» սրահին մէջ:

### ՅԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻԱՄ ՄԱԼՃԵԱՆԻ մահուն տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Մինաս եւ Սոնա Մալճեանին:

### ՅԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱԼՊԵՌ ԹԻԻԹԻՆՃԵԱՆԻ մահուն տխուր առիթով (մահացած Պէյրութ, Լիբանան) Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Քնարիկ Թիւթիւնճեան եւ գաւակները իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի տիկնոջ, գաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:  
Առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

**Հայ Թելեժամր Կը Վերադառնայ 18ը Ալիքի Վրայ**

Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը  
**Շաբաթը 7 օր անվճար**

Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ  
Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել  
Հայկական Թելեժամ (818) 982-2400

\*\*\*\*\*

**The Armenian Teletime Is Back On Channel 18**

Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day  
**7 Days Per Week, Free**

No Subscription Fee - Plus 40 Additional Channels

For info call The Armenian Channel (818) 982-2400

**Palm Springs**

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ զՆԱՑՈՂ ԳԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասեւեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, սինցեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450



Մանրամասների համար հեռաձայնել՝  
**(818) 246-0125**

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՈՒԺԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԸ

Շաբուակուածէջ 6-էն  
գօտութիւններ ընել ամերիկեան հողամասին տարածքներու վրայ, նահանգային, ծովային շրջաններէ մինչեւ Ալյասքայի խամուխտպան հողերը, ուր «Caribou» կոչուած կենդանիներ կ'ապրին:  
Մէկ խօսքով, Ամերիկայի ճարտարապետական եւ թեքնոլոգիք միտքը կրնայ, յարաբերաբար կարճ ժամանակի մը ընթացքին, քարիւղը եւ ուժային արտադրութեան այլ միջոցներ գտնել, օրինակի համար, ածուխային հարստութիւնը, քարիւղային մոլութեանէն ձերբազատուելու համար:  
Առաջը կ'ըսէ թէ «դանակը ոսկորին հասած է» իսկ Պուշի իշխանութիւնը, իր ապիկար քաղաքականութեամբ, մօտ ատենէն պատմութեան կ'անցնի:  
Նոր նախագահին կը մնայ, ով որ ալ ըլլայ անիկա, Պարաք թէ Մքքէյն, երկրի ուժային տագնապը լուծելու պարտականութիւնը: Իսկ եթէ Պուշէն ետք, աշխարհ անխոհեմութիւնը ունենայ Մերձաւոր Արեւելքի մէջ նոր տագնապներ ստեղծելու, օրինակի համար, Իրանի վրայ յարձակում մը Իսրայէլի կողմէ, Ամերիկայի օգնութեամբ, կրնանք վստահ ըլլալ որ այսօրուայ քարիւղի կայուն պիտի գտնուի 7-9 տոլարի, մինչեւ Ամերիկա կարենայ ուժային այլընտրական միջոցներ գարգացնել:  
Հասկանալիօրէն, 2008-ի ընտրութիւնները խիստ կարեւոր են ոչ միայն Ամերիկայի, այլ աշխարհի խաղաղութեան համար: Արդեօք կարելի է չուսալ որ ողջմիտ եւ խելացի իշխանութիւն մը կը հաստատուի այս մեծ երկրէն ներս, կարենալ գոհացուցիչ լուծումներ գտնելու ներքին եւ արտաքին ճակատի հարցերուն:

### «ԱՐԵՒԵԼԱՅԱՅԵՐԵՆԸ ԱՆԳԼԻԱՍՕՍ ԱՇԽԱՐՅԻ ԳԱՄԱՐ»

Շաբուակուածէջ 8-էն  
լով երկու լեզուներուն՝ հայերէնի եւ անգլերէնի միջեւ եղած տարբերութիւններուն եւ ընդհանրութիւններուն վրայ: Նոյնպէս, ըսաւ ան, որ գիրքին մէջ քերականութիւնը մատուցուած է ոչ թէ որպէս նպատակ, այլ միջոց հաղորդակցական ունակութեան համար: Քերականութեան կողքին, համամասնաբար հաշուի առնուած են լեզուի այլ բաղադրուցիչ մասեր, ինչպէս բառակազմութիւնը, հնչիւնաբանութիւնը, ուղղագրութիւնը եւ այլն: Ապա Սաքայեանը մէջբերեց գիրքը գրախօսող հայագետ Դաւիթ Գիւլգաղեանի խօսքերը. «Իր ներկայ կուռ կառուցով՝ այս գիրքը կիրարական լեզուաբանութեան նորագոյն նուաճումներու վրայ լեռնող կաղապարի մը նման է, որը կարելի է օգտագործել որեւէ օտար լեզուի դասագիրք կազմելու համար»:  
Արձագանքելով դահլիճէն եկող առաջարկին, Սաքայեան խօսեցաւ նաեւ յաւելուածին որպէս գրքին երկրորդ բաժնին մասին, որ կարող է ինքնին մէկ գիրք համարուիլ: Ապա ան յաւելուածի կարեւոր բաժինները թուելէ յետոյ, կանգ առաւ յաւելուածին կեդրոնական մասին վրայ: Այնտեղ գետեղուած է հայ ժողովրդական հեքիաթներու ու միջնադարեան առակներու, արձակ եւ չափածոյ գրական նմուշներու ստուար ծաղկաքաղ մը: Օտարագրի ընթերցողին համար հայ բանաստեղծութիւնները աւելի մատչելի դարձնելու նպատակով, չափածոյ գործերը կը գուղարուին անգլերէն թարգմանութեամբ: Որպէս նմուշ, Սաքայեան կարդաց Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ որդուն» բանաստեղծութեան անգլերէն իր իսկ թարգմանութիւնը, որ արժանացաւ ունկնդիրներու ծափահարութիւններուն:  
Եզրափակելով իր ելոյթը, Սաքայեան ըսաւ «Արեւմտահայ իր քոյր-գրքի հրապարակումից ուղիղ ութ տարի անց, ահա սեղանին եմ դնում արեւելահայերէնի այս դասագիրքն ու այն ուղեկցող խտասկաւազը: Այս երկու գրքերը պարփակում են իմ գիտամանկավարժական 55-ամեայ աշխատանքի փորձը, ինչպէս նաեւ մեծ սէրս մեծաքանակ հայոց լեզուին հանդէպ»:  
Հարց ու պատասխանի բաժինէ մը ետք, հանդիսավարը շնորհաւորական ու շնորհակալական խօսքով եզրափակեց այս եզակի երեկոն: Հիւրասիրութեան ընթացքին, ներկաները առիթ ունեցան մօտէն շփուելու հեղինակին հետ, եւ օրինակներ գտնելու դասագիրքին:

**ԲԱՑՈՒԱԾ Է**

Հիպնոսարուծութեան կեդրոն  
դեկավարութեամբ՝  
Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի  
Փասատիւնայի մէջ

Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ կ.ե. ժամը 3:00  
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E  
Pasadena CA 91104  
Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ

«Միտք մարմնի վրայ» թուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.  
-Մարմնային բռնիկ հիւանդութիւններ, արեան զերմնշում, շափարախտ, ազմա, Եւայն:  
- Մոլութիւններ - սիկարէթ, ալոյ, քմրադեղեր, Եւայն:  
- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անհանգստեան, Եւայն:  
- Մանուկներու յատուկ վիճակներ -ADD, գիշերային մէզ, եղունգի կրծում, Եւայն:  
- Ուսումնական եւ սրորթային բարելաւում



# Mission Wine & Spirits

*WE WILL BEAT ANY ADVERTISED PRICE!*

**JOHNNIE WALKER**  
**Black Label**  
 Scotch Whisky  
 17<sup>99</sup> 750ml  
 46<sup>99</sup> 1.75L

**JOHNNIE WALKER**  
**Green Label**  
 Scotch Whisky  
 39<sup>99</sup>

**JOHNNIE WALKER**  
**Gold Label**  
 Scotch Whisky  
 46<sup>99</sup>

**Hennessy**  
 COGNAC  
 20<sup>99</sup> VS  
 32<sup>99</sup> VSOP

**Hennessy**  
 COGNAC  
 XO  
 94<sup>99</sup>

**JOHNNIE WALKER**  
**Blue Label**  
 Scotch Whisky  
 109<sup>99</sup>

**GREY GOOSE**  
 VODKA  
 21<sup>49</sup>

**BELVEDERE**  
 VODKA  
 19<sup>99</sup>

**SKYY**  
 VODKA  
 8<sup>99</sup>

**Select Wines**  
 Assorted Varietals  
 Starting at  
 1<sup>89</sup>

**Don Julio**  
 AÑEJO  
 TEQUILA  
 35<sup>99</sup>

**Don Julio**  
 BLANCO  
 TEQUILA  
 24<sup>99</sup>

**TEQUILA**  
**CAZADORES**  
 REPOSADO  
 19<sup>99</sup>

**Ketel One**  
 VODKA  
 18<sup>49</sup>

**PATRÓN**  
 TEQUILA  
 SILVER or REPOSADO  
 33<sup>99</sup>

1785 E. Washington Blvd., Pasadena, CA 91104

(626) 794-7026 • (626) 794-7368

Near the corner of Allen & Washington • Open Monday—Saturday 9 am - 8 pm

[www.missionliquor.com](http://www.missionliquor.com)

\*Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 07/23/08 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded

• Prices subject to change without notice • No checks or credit cards

All items are 750ml in size unless specified.